AZG NEW PDF.qxd 1/29/2010 11:28 PM Page 1

Ազգ
Azg
30 ՅՈՒՆՈՒԱՐ 2010 ՇԱԲԱԹ 15 (4396)
ISSN: 1829-1651

# ԱՄՆ-ը կասեցնո՞ւմ է Ադրբեջանի ռազմավարական ծրագիրը

ԱՄՆ Սենատը ընդունել է մի օրենք, որը նախագահ Օբամային հնարավորություն է տալիս Ադրբեջանին պատժամիջոցների ենթարկելու: Ըստ ամերիկյան օրենքի՝ բոլոր այն ընկերությունները, որոնք վառելիք են մատակարարում Իրանին, կենթարկվեն ԱՄՆ-ի պատժամիջոցներին, իսկ Ադրբեջանի պետական նավթային ընկերությունը հենց այդ ընկերություններից է:

Մինչդեռ ադրբեջանական ընկերության եւ Իրանի միջեւ արդեն իսկ կա 2010-ին համագործակցելու ծրագրեր, որոնք, ադրբեջանական աղբյուրների համաձայն, երկրի ռազմավարական ծրագրերից են:

Հ. Ա.

# Դավութօղլուի հետ հանդիպմանը Նալբանդյանը վերահաստատեց հայկական կողմի դիրքորոշումը

## *Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացի ձախողումը հանգեցնելու է Թուրքիայի մեկուսացմանը*

Հ. ՉԱՔՐՅԱՆ\

Հունվարի 27-ին Լոնդոնում Աֆղանստանին նվիրված միջազգային կոնֆերանսի շրջանակներում Թուրքիայի արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն հանդիպել էր ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հետ: «**Ազգը**» տեղեկացրել էր այդ մասին՝ վկայակոչելով թուրքական թերթերը: Երեկվա համարներում դրանք, մասնավորապես «Զամանը», վերստին անդրադարձան Քլինթոն-Դավութօղլու հանդիպմանը, նաեւ մանրամասնեցին:

Ըստ «Զամանի», ՀՀ սահմանադրական դատարանի հայ-թուրքական Արձանագրությունների մասին որոշումը փակուղու առջեւ է կանգնեցրել Երեւան-Անկարա նորմալացման գործընթացը. դրա պատճառը որոշման մեջ Հայոց ցեղասպանությանը կատարված ակնարկն է, դա հակազդեցություն է առաջ բերել Թուրքիայում, սակայն դրա առնչությամբ Հայաստանից գրավոր իրավական երաշխիքներ ստանալու թուրքական կողմի ակնկալիքները չեն արդարանում:

Թուրքական թերթը գրում է, որ Դավութօղլուին ՀՀ սահմանադրական դատարանի որոշումից բխող մտավախությունների առնչությամբ չի աջակցել նաեւ ամերիկյան կողմը, թեեւ պետքարտուղար Քլինթոնը լսել է նրա գանգատները, սակայն ոչ մի արձագանք չի տվել, իսկ պետքարտուղարության խոսնակ Ֆիլիպ Քրոուլին հայտարարել է. «Սահմանադրական դատարանի որոշումը Հայաստանի խորհրդարանին միանգամայն տալիս է Արձանագրությունների վավերացման հնարավորությունը այն տեսքով, ինչ ստորագրվել են, եւ ոչ մի կերպ չի սահմանափակում կամ բնութագրում դրանք»:

*Տես էջ 3*

**ԱՆՀԱՍԿԱՆԱԼԻ**

# ԱՄՆ-ը պատասխանե՞լ է Ադրբեջանին, թե՞...

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության մամլո քարտուղար **Էլխան Պոլուխովի** խոսքերով՝ ԱՄՆ-ը պատասխանել է Բաքվի բողոքի նոտային, որով Ադրբեջանը հակադրվել էր Ղարաբաղին տրված ամերիկյան 8 մլն դոլար օգնությանը:

«ԱՄՆ-ը չի ճանաչում Լեռնային Ղարաբաղ անվանումով մարմին, իսկ յուրաքանչյուր օգնություն նախօրոք համաձայնեցվում է Բաքվի հետ», նշված է ԱՄՆ-ի պատասխանում:

Սակայն, հետաքրքական է, նախ այդ ինչպե՞ս Միացյալ Նահանգները չի ճանաչում Ղարաբաղ անունով մարմին, բայց օգնում է նրան, եւ երկրորդ, այդ ինչպե՞ս է ամերիկյան օգնությունը նախօրոք համաձայնեցվում Բաքվի հետ, երբ հենց նույն Բաքուն բողոքի նոտաներ է ուղարկում Վաշինգտոն՝ օգնություններից հետո: Ինչպես ասում են՝ այստեղ մի բան այն չէ՝ մանավանդ հաշվի առնելով հարեւան երկրի ստելու սովորությունը:

Հ. Ա.

# Ադրբեջանական բանակ. 6 զոհ, 2 ծանր վիրավոր

Հենվելով Ադրբեջանի պաշտպանության նախարարության տարածած տեղեկության վրա, ադրբեջանական «Վեստի.ազ»-ը նշում է, որ հունվարի 28-ի ժամը 18-ին Ադրբեջանի բանակի «անհայտ» զորամասում 6 զինվոր են մահացել: Անհայտ պատճառներով երկու զինվոր ավտոմատից կրակ են բացել զինակիցների վրա, 4 զինվոր մահացել են, 2-ը՝ ծանր վիրավորվել: Հանցագործությունը կատարելուց հետո երկու «հրաձիգները» ինքնասպանություն են գործել: Ադրբեջանական «Ազադլիգ»-ը տեղեկացնում է, որ ադրբեջանական «անհայտ» զորամասը գտնվում է Դաշքեսանում, իսկ զինվորները կրակ են բացել զորամասի հրամանատարության վրա. մահացել են զորամասի հրամանատարը, շտաբի պետը ծանր վիրավորվել է: «Ազադլիգ»-ը շարունակում է. «Զինվորներն այնքան են շահագործվել ու ստորացվել հրամանատարության կողմից, որ դիմել են նման քայլի»: Այնուամենայնիվ բանակում կարեւորը զենքի որակն ու թարմությունը չէ, այլ հոգեբանական վիճակը. դա է մարտունակության միակ գրավականը:

Հատկանշական է, որ ադրբեջանական բանակի իրական դեմքը եւս մեկ անգամ պարզ դարձավ այն օրը, երբ ողջ հայությունը նշում էր հայոց հաղթանակած բանակի օրը:

Հ. Ա.

# ԱՄՆ-ը վերահաստատել է, Հայաստանը՝ հավաստիացրել



Հայաստանի արտաքին գործերի նախարարության տեղեկատվության վարչությունից հայտնում են, որ հունվարի 28-ին Լոնդոնում հանդիպել են ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն ու ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը:

Նալբանդյանն իր ամերիկացի գործընկերոջը եւս մեկ անգամ հավաստիացրել է, որ Հայաստանը հետամուտ է իր՝ ցյուրիխյան ստորագրություններին, եւ Սահմանադրական դատարանի որոշումը միայն այդ մասին է վկայում: Հայաստանի արտաքին գերատեսչության ղեկավարը նշել է նաեւ, որ Թուրքիայից ակնկալվում են համարժեք քայլեր: Քլինթոնն իր հերթին վերահաստատել է Նահանգների դիրքորոշումը հայ-թուրքական գործընթացների հետ կապված եւ կոչ է արել կողմերին որքան հնարավոր է շուտ վավերացնել ստորագրված արձանագրությունները: Իսկ ԱՄՆ-ը, Քլինթոնի խոսքերով, ամեն ինչ անելու է դրա համար:

Նալբանդյանը Քլինթոնին ներկայացրել է նաեւ վերջերս Սոչիում կայացած Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպման արդյունքները: Նալբանդյանը կարեւորել է ԱՄՆ-ի դերը՝ որպես Մինսկի խմբի համանախագահ երկրի: Լոնդոնյան հանդիպման ընթացքում քննարկվել են նաեւ հայ-ամերիկյան հարաբերությունների հարցեր: Երկու բարձրաստիճան դիվանագետներն էլ գոհունակություն են հայտնել երկկողմ բարեկամական հարաբերություններից եւ վստահություն են հայտնել, որ հայ-ամերիկյան փոխշահավետ համագործակցությունը կխորանա ու կամրապնդվի:

Հ. Ա.

# Յուրի Լուժկովի գլխավորած պատվիրակությունը Երեւանում է



**Երեւանի քաղաքապետ Գագիկ Բեգլարյանի հրավերով երկօրյա պաշտոնական այցով Երեւանում է Մոսկվայի քաղաքապետ Յուրի Լուժկովի գլխավորած պատվիրակությունը: Երեկ կեսօրին Երեւանի քաղաքապետարանի ճեմասրահում ստորագրվեցին համագործակցության համաձայնագրեր:**

**Համագործակցության ծրագրեր ստորագրվեցին Երեւանի Կենտրոն եւ Մոսկվայի Կենտրոնական վարչական շրջանների միջեւ, ինչպես նաեւ Ավան եւ Մոսկվայի Հյուսիսային վարչական շրջանների միջեւ կրթության, մշակույթի, սպորտի, բարեկարգման, կանաչապատման, համատիրությունների գործունեության եւ քաղաքային տնտեսության մի շարք այլ ոլորտներում:**

Ս. Ս.

# Հաստատվեց «Երիտասարդ ընտանիքներին՝ մատչելի բնակարան» ծրագիրը

Կառավարությունը երեկ հաստատեց «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագիրը, որը նպատակ ունի պետական աջակցություն ցույց տալու բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող երիտասարդ ընտանիքներին: Կարեւորելով այս որոշումը, վարչապետ **Տիգրան Սարգսյանը** տեղեկացրեց, որ համաձայն Կենտրոնական բանկի հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության, ծրագրի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է ԿԲ կողմից ներդնել 3 մլրդ դրամ, որը կբավականացնի մոտ 300 վարկի վերաֆինանսավորմանը՝ վարկի 10 մլն դրամ միջին գումարի եւ 10 տարի ժամկետի դեպքում: Վարչապետը նշեց նաեւ, որ նշված գումարը չբավարարելու դեպքում կներգրավվեն լրացուցիչ ռեզերվներ, իսկ նախնական հաշվարկները վկայում են, որ ծրագրից կարող են օգտվել հազարավոր ընտանիքներ: Հաշվարկները ցույց են տալիս, որ երիտասարդ ընտանիքներն այս վարկավորումից օգտվելու դեպքում ամսական կվճարեն մոտ 130 հազար դրամ:

Այս առթիվ հարցը ներկայացնող ֆինանսների նախարար **Տիգրան Դավթյանը** տեղեկացրեց, որ այս ծրագրի մեջ կարող են ընդգրկվել այն ընտանիքները, որոնց ամուսինների գումարային տարիքը չի գերազանցում 60-ը, իսկ ամուսիններից մեկի տարիքը չի գերազանցում 35-ը: Ըստ նախարարի, վարկերը կտրամադրվեն 10 տարի ժամկետով, իսկ տարեկան միջին տոկոսադրույքը կկազմի 8,5-9 տոկոս:

Ա. Ս.

# «Առանց օկուպացիայի վերացման Թուրքիան չի վավերացնի Արձանագրությունները»

## *Համոզված հայտարարել է Իլհամ Ալիեւը «Ուոլ սթրիթ ջոռնլ»-ին տված հարցազրույցում*

**Թեեւ հարցազրույցին երեկ անդրադարձել է հայաստանյան էլեկտրոնային մամուլը, ուստի կարելի էր շրջանցել դրա թուրքական արձագանքը, սակայն թուրքականի շեշտադրումները բոլորովին այլ են, հետեւաբար ամբողջացնում են Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման գործընթացում Թուրքիայի հետապնդած նպատակների մասին մեր պատկերացումները:**

**Հետաքրքրական են նաեւ Իլհամի տեսակետներին «Ուոլ սթրիթ ջոռնլ»-ի տված գնահատականները, որոնց մասին երեկ տեղեկացրել էր Նյու Յորքի «Թուրքական» կայքէջը: Կայքէջի վկայությամբ՝ հարցազրույցում Ադրբեջանի նախագահն ասել է. «Վստահ եմ, որ Թուրքիան չի վավերացնի հայ-թուրքական Արձանագրությունները, քանի դեռ Հայաստանը չի ազատել Ադրբեջանի օկուպացրած տարածքները՝ Լեռնային Ղարաբաղը ներառյալ»:**

**Այնուհետեւ Ալիեւը նշել է, որ տարածաշրջանում ձեւավորվել է «միասնական կարծիք», համաձայն դրա՝ առաջին քայլը Հայաստանը պետք է կատարի: Միաժամանակ նա իր համար գոհացուցիչ է համարել Արձանագրություններին Թուրքիայի մոտեցումը:**

**«Ուոլ սթրիթ ջոռնլ»-ը, մեկնաբանելով նրա խոսքերը, ընդգծել է, որ հայ-թուրքական բանակցությունները զայրացրել են Ալիեւին, դրա պատճառով նա Թուրքիային սպառնացել է ադրբեջանական նավթն ու բնական գազն արտահանել այլ երկրի տարածքով, օրինակ՝ Վրաստանի, Իրանի կամ Ռուսաստանի: Վերջում ամերիկյան պարբերականը նշել է. «Համատեղ սահմանի բացման եւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ համաձայնությունը, որը ձեռք է բերվել Հայաստանի ու Թուրքիայի միջեւ, տապալման վտանգի տակ է: Ալիեւի հայտարարություններն էլ ավելի են մեծացնում այդ վտանգից բխող մտավախությունները»:**

Հ. Չ.

# «Միավորվենք հանուն Հաիթիի»

Երեկ ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի դահլիճում բացվեց «Միավորվենք հանուն Հաիթիի» բարեգործական ցուցահանդես-վաճառքը, որի ամբողջ հասույթն ուղարկվելու է Հաիթի: Ցուցահանդես-վաճառքը բաց կլինի մի շաբաթ: Բարեգործական ակցիան նախաձեռնել էր ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիան վեց հասարակական կազմակերպությունների հետ: ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիայի փոխնախագահ **Արամ Ոսկանյանը** նշեց.

«Յուրաքանչյուր ոք կարող է ունենալ շոշափելի ներդրում այս ակցիայում, եւ ամենակարեւոր ձեռքբերումն այն է, որ տարբեր ոլորտների ներկայացուցիչներ միավորվել են՝ օգնելու Հաիթիի երկրաշարժից տուժածներին»:

Ցուցահանդեսում ներկայացված են «Փյունիկ» հաշմանդամների միության, «Դավիթ» արվեստի կենտրոնի, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության երիտասարդաց տների, ինչպես նաեւ անհատ ստեղծագործողների արվեստի աշխատանքներ՝ լուսանկարներ, յուղանկարներ, գործվածքներ, քանդակ-



ներ, որոնք արժեն 500 դրամից մինչեւ 50 հազար դրամ: Բացման արարողությանն իր համերգային ելույթով մասնակցեց նաեւ «Գառնի» վոկալ կվինտետը:

**Վիկտորիա Թերշլերը** նոր է եկել Հաիթիից, այնտեղ նա աշխատել է ՅՈՒՆԻՍԵՖ-ում՝ երեխաների իրավունքների ոլորտում:

«Ծայրահեղ թշվառ վիճակում է Հաիթիի բնակչությունը, մի շնչին օրական տալիս են մի դոլար, եւ այս ձեւով ապրում է բնակչության 60%-ը: Հիվանդանոցներն ավերված են, մարդիկ մահանում են հիվանդություններից ու թերսնումից», ասաց ականատես Թերշլերը:

ՄԱԿ-ի Հայկական ասոցիացիան նախաձեռնել է Հաիթիի երկրաշարժից տուժածներին աջակցելու բարեգործական միջոցառումների շարք:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ



# Վարչապետը առանձնացրեց հաջողություն արձանագրած 4 ոլորտ

**Կառավարության երեկվա նիստը սկսվելուց առաջ վարչապետ Տիգրան Սարգսյանն անդրադարձավ նախարարությունների ներկայացրած հաշվետվություններին, արձանագրելով «չորս ոլորտի հաջողությունները»:**

**Առաջինը տեսական եկամուտների կոմիտեի գործունեության արդյունքում 2009-ին գերավճարների էապես նվազեցումն է: Այդ հիմնախնդիրը չէր լուծվում տարիներ շարունակ, եւ առաջին անգամ շուրջ 25 մլրդ դրամով նվազել են գերավճարները: «Այսինքն՝ 25 մլրդ դրամ լրացուցիչ միջոցներ են մնացել մեր տնտեսվարող սուբյեկտների մոտ: 2009թ. 24 մլրդ դրամի արտոնություն է տրամադրված 32 հազար փոքր եւ միջին ձեռնարկությունների, 15 տոկոսով նվազել են հաշվետվությունները՝ հեշտացնելով շփումները տեսական եկամուտների կոմիտեի հետ: Մեր քաղաքացիներին ՀԴՄ կտրոններով վճարվել են 3.7 մլրդ դրամի բոնուսներ», փաստեց Տիգրան Սարգսյանը:**

**Հաջողություն արձանագրած երկրորդ ոլորտը, ըստ վարչապետի, առողջապահությունն է: «Ծնելիության օժանդակության, ծննդօգնության տեսական ծրագիրը տվել է իր դրական արդյունքը: 2009թ. 2008-ի համեմատ 3 հազարով աճել է ծնելիության թիվը», նշեց նա, ավելացնելով, որ ստվերայնությունն այս ոլորտում 90 տոկոսից նվազել է մինչեւ 21 տոկոսի:**

**Երրորդը սոցիալական ոլորտն է, որտեղ ընդգծվեց 14 տոկոս տնտեսական անկման պարագայում 16 տոկոսով թոշակների, 12 տոկոսով սոցիալական նպաստների ավելացումը, երրորդ եւ ավելի երեխաների պարագայում 300 հազարից վճարը 430 հազար դրամ, երեխայի խնամքի վճարը 3 հազար դրամից շեշտակի 18 հազար դրամ, միանվագ վճարները 35 հազար դրամից 50 հազար դրամ դարձնելը:**

**Չորրորդ ոլորտը, Տիգրան Սարգսյանի հավաստմամբ, ոստիկանության աշխատանքն է: «Յոթ տարվա ընթացքում առաջին անգամ մենք արձանագրել ենք ճանապարհատրանսպորտային պատահարների նվազում, ընդ որում՝ ԱՊՀ երկրների եւ միջազգային տվյալների համեմատ Հայաստանը նվազման բացառիկ ցուցանիշ է արձանագրել: Շատ ուրախալի է, որ ճանապարհատրանսպորտային պատահարներից զոհվածների թիվը 2008թ. համեմատ նվազել է 84-ով, իսկ մարմնական վնասվածք ստացածների թիվը՝ 372-ով», ասաց նա:**

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# 50-ամյակ

Երեկ վարչապետ Տիգրան Սարգսյանը դարձավ 50 տարեկան: Ուժերի ծաղկման եւ աշխատանքային կորովի արդյունավորման հրաշալի տարիք՝ իրականացնելու պետական թե անձնական բոլոր ծրագրերը: Ջերմորեն շնորհավորում ենք վարչապետին եւ մաղթում ամենայն բարիք եւ նորանոր հաջողություններ:

# Ստամբուլահայ համայնքի գոյությունը վտանգված է

Եթե նախկինում Ստամբուլում հայ քրիստոնյաների թիվը կազմում էր 250-300 հազար, ապա վերջին շրջանում համայնքի թիվը զգալիորեն կրճատվել է՝ հասնելով 50-60 հազարի: Դրա գլխավոր պատճառը խառնամուսնություններն են, որոնք վտանգում են ստամբուլահայ համայնքի գոյությունը: Թուրքագետ **Ռուբեն Մելքոնյանի** դիտարկումների համաձայն՝ խառնամուսնություններն այսօր կազմում են 40 տոկոս, ինչն էլ հանգեցնում է համայնքի թվի կրճատմանը:

Թուրքագետը մտահոգություն է հայտնում, որ այսօր ստամբուլահայ համայնքը կանգնած է բազմաթիվ խնդիրների առաջ: Դրանցից են համայնքում հայկական դպրոցների քանակի շեշտակի նվազումը, Պոլսո հայոց պատրիարքարանի ընտրությունները:

Ստամբուլում գոյություն ունեցած 32 հայկական դպրոցներից այժմ գործում են 17-ը, ընդ որում մեծ է վտանգը, որ հայ աշակերտների թվի նվազման հետեւանքով առաջիկա տարիներին դրանցից մի քանիսը եւս կփակվեն: Նրա տեղեկացմամբ՝ մեկ ամիս առաջ եւս մեկ հայկական դպրոց է փակվել, իսկ հայ աշակերտների թիվը կազմում է 3.000:

Մելքոնյանը պայմանականորեն ստամբուլահայ համայնքը բաժանում է 3 խմբի: Առաջինում ներգրավված են ազգային խնդիրների նկատմամբ անտարբերները, որոնք մտահոգված են բացառապես սեփական կենցաղային հարցերը լուծելով: «Երկրորդ խմբում զգուշավոր, հարմարվող եւ վախեցած հայերն են, ովքեր խուսափում են իրենց տեսակետերը բարձրաձայնելուց: Երրորդ խումբն ամենափոքրաթիվն է: Նրանք համարվում են համայնքի ակտիվ հատվածը, սակայն վճռորոշ դեր չունեն համայնքի կյանքում»:

Հ. Հ.

# «Միկա ցեմենտը» վերազինում է արտադրությունը

**Ինչպես տեղեկացանք «Միկա ցեմենտ» ընկերությունից, թաց եղանակով ցեմենտի ստացման հնացած տեխնոլոգիաների փոխարինման նպատակով սկսվել է երկրորդ տեխնոլոգիական հոսքագծի վերազինումը: Միաժամանակ սկսվել է նոր փաթեթավորման արտադրամասի շինարարությունը, որը հնարավորություն կտա 1 ժամում փաթեթավորելու 50 կգ քաշով 3000 ցեմենտի պարկ, նվազեցնելու արտադրական կորուստները, բարձրացնելու արտադրության կուլտուրան եւ իջեցնելու արտանետումները մթնոլորտ: Աշխատանքները նախատեսվում է ավարտել այս տարվա մայիսին:** Ա. Մ.

# Սեյսմակայունության համալիր ստուգումներ Գյումրու բնակարանային շինօբյեկտներում

Ըստ Գյումրիում գործող Քաղաքական մշակույթի եւ համաձայնությունների զարգացման «Շիրակ կենտրոն» ՀԿ-ից ստացված տեղեկատվության, արդեն մի քանի օր է, ինչ հանրապետության իշխանությունների որոշմամբ «Հայսեյսմշին» գիտահետազոտական ինստիտուտի մասնագետները Գյումրու Մուշ-2 թաղամասում «Գլենդել հիլզ» ընկերության նոր կառուցած բնակելի շենքերի սեյսմակայունության համալիր ստուգումներ են սկսել իրականացնել:

Ինչպես «**Ազգը**» տեղեկացրել է, Գյումրիում երկրաշարժից անօթեւան ընտանիքների իրավունքների պաշտպանության ծրագիր իրականացնող «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպությունը հունվարի 18-ին տարածել էր ՀՀ նախագահին եւ վարչապետին ուղղված բաց նամակ, որում մտահոգություն արտահայտելով կառուցվող շենքերի ամրության եւ որակի մասին անօթեւանների շրջանում տարածվող խոսակցությունների առթիվ, առաջարկել էր ստեղծել մի փորձագիտական հանձնաժողով՝ խնդիրը տեղում ուսումնասիրելու եւ արդյունքները հանրայնացնելու նպատակով:

«Շիրակ կենտրոնի» նախագահ **Վահան Թումասյանը** մեզ հեռախոսով տեղեկացրեց, որ համալիր ստուգումների մասին իրենք գրավոր տեղեկացում են ստացել նաեւ ՀՀ քաղաքաշինության նախարարությունից: Գ. Մ.

# Բաբուխանյանը դժգոհ է կառավարությունից

## Հատկապես Նալբանդյանի մեղմիկ ոճից ու «что?, где?, когда?» խաղացող վարչապետից

**«Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության նախագահ Հայկ Բաբուխանյանը նկատում է Հայաստանում նախապատերազմական վիճակի ռիսկայնության ավելացում, հետեւաբար այդ պայմաններում Հայաստանը պետք է դառնա շատ հզոր, կուռ բռունցք: Բաբուխանյանն առաջարկում է մինչ բռունցք դառնալը փոխել կառավարության մեծ մասը: «Որովհետեւ կառավարությունը, որը ղեկավարվում է «что?, где?, когда?» խաղացող վարչապետով, նախարարներով, որոնց մեծ մասը, բացառությամբ երեւի 2-3-ի, պարզապես գանձագողեր են (Վերստուգիչ պալատի բացահայտումները դա են ցույց տալիս), իհարկե, այսպիսի կառավարությունով գնալ նախապատերազմական վիճակում կուռ բանակ ու տնտեսություն ստեղծելուն, մենք չենք կարող: Պետք են նո՛ր մոտեցումներ, նո՛ր մարդիկ, նո՛ր կառավարման մեթոդներ»:**

**Բացի նրանից, որ վարչապետը ինտելեկտուալ խաղերի սիրահար է, Բաբուխանյանը չի ընդունում ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի «մեղմիկ ոճը»: «Գտնում եմ, որ մեր արտաքին քաղաքականությունը պետք է լինի ագրեսիվ»: Շարունակելով առաջարկությունների շարքը՝ Բաբուխանյանը նախ կարծիք հայտնեց, որ Հայաստանը պետք է դադարեցնի իր մասնակցությունը ԵԽԽՎ-ի աշխատանքներին, քանի որ այնտեղ խախտվում են մարդու իրավունքները, իսկ հետո առաջարկեց դադարեցնել ԵԽԽՎ-ում «Ժառանգություն» կուսակցության գործունեությունը, քանի որ այն հակապետական է:**

**«Եթե Թուրքիան կարողանում է դադարեցնել ազգային փոքրամասնության կուսակցության գործունեությունն իր տարածքում, եւ Եվրոպան դրան ծափ է տալիս, ապա ինչո՞ւ Հայաստանը չի կարող դադարեցնել «Ժառանգության» գործունեությունը: Նա Հայաստանի հետ պատերազմական կամ համարյա պատերազմական վիճակում գտնվող Թուրքիայի եւ Ադրբեջանի շահերին նպաստող բացահայտ եւ անքող գործունեություն է ծավալում»: Բաբուխանյանը «Ժառանգության» գործունեությունը նմանեցնում է մի իրավիճակի, երբ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Սովետմիության մեջ գտնվեր մի քաղաքական ուժ, որ գնար Հիտլերի հետ համագործակցելու, որպեսզի Սովետական Միությունում Ստալինին փոխեն ու ստեղծեն դեմոկրատիա:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

AZG NEW PDF.qxd 1/29/2010 10:25 PM Page 1



# 2009-ի տնտեսական տարվա առանձնահատկությունները

Օրերս ազգային վիճակագրական ծառայությունը հրապարակեց Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակը բնութագրող օպերատիվ տվյալները, համաձայն որոնց, մեր երկրի տնտեսական անկումը կազմել է 14,4 տոկոս: Հայտնի է, որ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը զգալի ազդեցություն ունեցավ Հայաստանի տնտեսության վրա: Տարվա կեսին՝ հունվար-հուլիս ժամանակահատվածում, տնտեսական անկումը հասավ իր, այսպես ասած, հատակին, կազմելով 18,5 տոկոս: Ինչը նշանակում է, որ մինչեւ տարեվերջ տնտեսական անկումը նահանջեց ավելի քան 4 տոկոսով:

Հարկ է նշել, որ տնտեսական անկումը Հայաստանում սկսեց դադարել ոչ թե օգոստոսից, այլ մայիսից: Սկսած այդ ամսից, յուրաքանչյուր հաջորդ ամիս նախորդի նկատմամբ զգալի աճ էր արձանագրվում, բայց քանի որ 2008-ի վերջին եռամսյակում եւ 2009-ի առաջին 4 ամիսներին անկումն այնքան զգալի էր, այդ աճի միտումը հնարավորություն չէր տալիս, որ նախորդող տարվա համեմատ արձանագրվող անկման տեմպը սկսեր կրճատվել ոչ թե օգոստոսից, այլ հենց մայիսից:

Միաժամանակ, ակնհայտ է, որ եթե հոկտեմբերին եւ նոյեմբերին տնտեսական աշխուժացման միտումը պահպանվեր, ապա տարեկան արդյունքում ավելի փոքր տնտեսական անկում կարձանագրվեր: Մինչդեռ այդ ամիսներին, մայիսից սկսված, աճի միտումը նախորդ ամսվա նկատմամբ կանգ առավ եւ անգամ սկսեց նվազել, ինչը հաղթահարվեց միայն դեկտեմբերին: Տարվա վերջին ամսին նոյեմբերի նկատմամբ գրանցվեց 18,3 տոկոս աճ, ինչի շնորհիվ տնտեսական անկումն ավելի մեծ չափով նահանջեց, քան կառավարության եւ միջազգային ֆինանսական կազմակերպությունների կանխատեսած 15-15,5 տոկոսը:

Սովորաբար, դեկտեմբեր ամսին, նկատի ունենալով նախատոնական աշխուժությունը, աճ է արձանագրվում նոյեմբերի նկատմամբ: Այսինքն, պետք չէ շատ ուրախանալ այդ ամսին արձանագրված աճով, քանի որ դրանում ամենանշանակալի ավանդ ունեցել է մանրածախ առեւտուրը, որի ծավալները նոյեմբերի համեմատ ավելացել են գրեթե 71 տոկոսով (շուրջ 177 մլրդ դրամով), ապա՝ ծառայությունները, որտեղ նոյեմբերի նկատմամբ արձանագրվել էր 49 տոկոս աճ (շուրջ 99 մլրդ դրամով): Այս առումով, առավել մխիթարականը դեկտեմբերին շինարարության 14,8 տոկոսով (շուրջ 77 մլրդ դրամով) եւ հատկապես արդյունաբերական արտադրանքի 8,7 տոկոսով (մոտ 73 մլրդ դրամով) աճն է նոյեմբերի նկատմամբ: Ընդ որում, արժե նշել, որ նախորդ՝ 2008 եւ 2007 թվականների դեկտեմբեր ամիսներին նոյեմբերի նկատմամբ արդյունաբերության աճն այդպես նկատելի չէր: 2007-ի դեկտեմբերին կազմել էր 1,2 տոկոս, իսկ 2008-ի դեկտեմբերին՝ 3,1 տոկոս նոյեմբերի նկատմամբ:

Կարելի է ակնկալել, որ հատկապես արդյունաբերության ոլորտում 2010-ին դրական տեղաշարժն ավելի կլինի, քանի որ դրա համար կան մի քանի նպաստավոր պայմաններ: Մասնավորապես, միջազգային ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ կտրուկ իջած մոլիբդենի եւ պղնձի գներն այժմ կրկին բարձրացել են, հայկական դրամը նախորդ տարվա այս ժամանակահատվածի համեմատ մոտ 20 տոկոսով արժեզրկվել է, կառավարության ներգրաված միջոցներով վարկավորվել են հազարավոր, այդ թվում՝ արտադրական փոքր եւ միջին ձեռնարկություններ, իսկ մի շարք դեպքերում կառավարությունն անմիջականորեն է վարկ տրամադրել խոշոր համակարգաստեղծ ձեռնարկություններին եւ իրատեսական բիզնես պլան ներկայացրած ընկերություններին, իրականացվել եւ իրականացվում են ենթակառուցվածքների նորոգման ծրագրեր, տնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ կառավարության նախատեսած միջոցառումներից ոմանք սկսել են իրականացվել, բանկերը ավելացրել են վարկավորման ծավալները:

Մեկ այլ հետաքրքրական փաստ է դեկտեմբերին արձանագրվել արտահանման-ներմուծման ցուցանիշների մեջ: Այստեղ, իհարկե, խիստ մտահոգիչ է արտահանման ծավալների ավելի քան մեկ երրորդով (34 տոկոսով) անկման տարեկան ցուցանիշը: Սակայն, ի տարբերություն դարձյալ 2007-ի եւ 2008-ի դեկտեմբեր ամիսների, երբ արտահանումը առաջին դեպքում նվազել էր 21,4 տոկոսով, իսկ երկրորդում՝ 8,2 տոկոսով նոյեմբեր ամսվա նկատմամբ, այս տարվա դեկտեմբերին նոյեմբերի նկատմամբ արտահանումը, թեկուզ 1,8 տոկոսով, բայց ավելացավ: Մինչդեռ ներմուծումը դեկտեմբերին նվազեց 4,4 տոկոսով, հակառակ նրան, որ ավանդաբար ներմուծումը տարվա վերջին ամսին կտրուկ աճ էր արձանագրում:

Արտահանման եւ արդյունաբերության ծավալների որոշակի աճը դեկտեմբերին, բնականաբար, փոխկապակցված է, եւ պետք է հուսալ, որ դա ավելի նկատելի կլինի այս տարվա ընթացքում, ինչի արդյունքում կհաջողվի կրճատել արտահանման-ներմուծման 2,6 մլրդ դոլար բացասական հաշվեկշիռը:

2009-ի տնտեսական անկման համատեքստում հետաքրքրական են աշխատավարձերի եւ մանրածախ առեւտրի ցուցանիշները: Թեեւ տարեկան տնտեսական անկումը Հայաստանում կազմեց 14,4 տոկոս, բայց միջին աշխատավարձը ոչ միայն չնվազեց, այլեւ աճեց 9,8 տոկոսով: Ընդ որում, այն ավելացավ ոչ միայն պետական հատվածում (15,5 տոկոսով), ինչը պայմանավորված է պետական քաղաքականությամբ, այլեւ մասնավոր հատվածում (5,3 տոկոս):

Մանրածախ առեւտրի ծավալների տարեկան 1 տոկոս կամ ավելի քան 15 մլրդ դրամով աճը ճգնաժամային տարում, երբ տնտեսական անկումը 14,4 տոկոս է, նույնպես արժանի է հիշատակման: Սա մի կողմից արդյունք է աշխատավարձերի եւ սոցիալական ծախսերի պահպանման, մյուս կողմից՝ մանրածախ ապրանքաշրջանառության իրական ծավալները ՀԴՄ-ների միջոցով ստվերից դուրս բերելու պետական քաղաքականությամբ:

Ինչ վերաբերում է 2010-ի համար կանխատեսվող 1-1,5 տոկոս տնտեսական աճին, ապա տարվա առաջին 4-5 ամիսներին, 2009-ի նույն ժամանակահատվածի համեմատ, երբ տնտեսական անկումը խորանում էր, հավանական է, որ տնտեսական աճի ցուցանիշն ավելի բարձր լինի: Սակայն մինչեւ տարեվերջ աճի նման միտում պահպանելն անհնար կլինի, քանի որ այդ ցուցանիշները համադրվելու են 2009-ի երկրորդ կեսի հետ, երբ մի քանի ամիս աճ էր արձանագրվում նախորդ ամսվա նկատմամբ:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Մահացավ Սելինջերը



**«Հազիվ թե գտնվի մեկ ուրիշը, որ կարողանա այդպես ի հայտ բերել նախապաշարումների, անհեթեթ պայմանականությունների, կեղծ արժեքների ողջ աղբը, որ կեղտոտում է կյանքը», գրված է 1978 թվականին հայերեն լույս տեսած ամերիկացի հանրաճանաչ գրող Ջերոմ Սելինջերի գրքի նախաբանում: Երեկ հասավ լուրը, որ Նյու Հեմփշիր նահանգի Քեմփշիր քաղաքի իր տանը 91 տարեկանում մահացել է տարբեր երկրների շատ ընթերցողների սիրելի գրողը:**

**Տանս այդ գիրքը երկար փնտրելու հարկ չեղավ՝ սիրելի գրքերի նման դրված էր ձեռքին մոտիկ՝ ուրիշ, տարիներով չբացվող եւ խիտ շարքերում անհույս կորված գրքերի համեմատ: Մաշված կազմն ասում էր, որ նորից ու նորից, բազմաթիվ անգամ ընթերցվել է: Այո, Սելինջերն իմ սերնդի ընթերցողի լավագույն գրքերից էր, որ հատկապես դուր էր գալիս այն մարդկանց, ովքեր ընդվզում էին երեսպաշտության ու կեղծիքի դեմ, ով կարող էր մարդկային հոգու խորունկ շերտերի բացմանը, ով չէր ուզում մակերեսից ստանալ իր սնունդը, այլ սուզվել կորալների ու մարգարիտների խորախորունկ աշխարհը: «Տարեկանի արտում, անդունդի եզրին» վեպն ամոքում էր հոգին, մաքրում թանձր ստվերներից ու կեղծից: «Ծովեզրը բա՛րձր, ատաղձագործնե՛ր»-ը պատերազմի ողջ արհավիրքի՝ մարդու հոգին փոխադրվելու ու ծանր նստելու մասին է, որի պատճառով մի ողջ սերունդ այդպես էլ այլեւս չկարողացավ հասնել երջանկության հետեւից. ընթերցելով վիպակը՝ կարելի է հանգիստ ու բարձրաձայն արտաբերել.«Ահա թե ինչպիսին պետք է լինի իսկական գրականությունը՝ բոլոր գաղտնիմաստների բացահայտումը թողնված է ընթերցողին»: «Լավ է բռնվում ձկնիկ-բանանիկը» շաղախված է կորուստների անդառնալիության թախիծով. ձկնիկ -բանանիկները լողում են դեպի քարայր, ուր շատ բանան կա, քարանձավ մտնելիս սովորական ձկնիկներ են, իսկ այնտեղ իրենց խոզավարի են պահում՝ այնքան են ուտում-հաստանում, որ չեն կարողանում դուրս գալ այնտեղից... ու մահանում են: Ահա կյանքը մարդուն կարող է դարձնել այդ ձկնիկ բանանիկների նման, որոնք այլեւս ելք չունեն: Սելինջերը գրում էր մի իրականության մասին, որ հիմա շատ երկրներ անցնում են: Սելինջերի նկարագրածը պատերազմ տեսած, սոցիալական մամլիչի տակ հայտնված, արժեքների վայրիվերումներին տրված հայկական այսօրվա իրականության հետ մեկին մեկ է: Սակայն կյանքի պրոզան նկարագրող Սելինջերը բանաստեղծ է մնում, որ փոխհատուցում է պրոզայի դառնությունը:**

**Եղել է ժամանակ, որ կեղծ բարեպաշտները եւ երկերեսանիներն ամերիկյան դպրոցներից հեռացրել են այն ուսուցիչներին, որոնք խորհուրդ էին տալիս աշակերտներին Սելինջեր կարդալ:**

**1951 թվականին, երբ լույս տեսավ Սելինջերի «Տարեկանի արտում, անդունդի եզրին» գիրքը, նրա անունը հայտնի դարձավ ողջ աշխարհին, 60 տարում 60 մլն օրինակ վաճառվել է այդ վեպից, ոչ մի անգամ ընթերցողը չի դադարել հետաքրքրվել այդ գրքով: Գիրքը լույս տեսնելուց հետո ԱՄՆ-ի որոշ նահանգներում գրքի տարածումն արգելեցին՝ իբր անկումային տրամադրություն է հաղորդում մարդկանց, սակայն դա առավել հետաքրքրություն առաջացրեց: Սելինջերը հավանաբար նման էր իր ստեղծագործությունների հերոսներին, որովհետեւ իր հանրաճանաչության ամենաբարձր շրջանում, 1965 թվականից հեռացավ հասարակությունից, որոշեց այլեւս չհրապարակել իր գրքերը, չթույլատրել էկրանավորել իր վիպակներն ու պատմվածքները: Նա շփվում էր միայն իր ընտանիքի՝ կնոջ, դստեր եւ որդու ու մի քանի մտերիմի հետ, սակայն մեկ օր անգամ չի դադարել ստեղծագործել եւ ահռելի քանակությամբ ձեռագրեր է թողել: Նրա դուստր՝ Մարգարետ Սելինջերի հուշերում հիշատակվում է, որ իրենց տունը լեփ-լեցուն է հոր ձեռագրերով, որոնք հայրը թույլ է տալիս հրատարակել միայն իր մահից հետո: Հասկանալի է, որ այդ ձեռագրերի հետ կապված մի իսկական որս կսկսվի այժմ, երբ գրողը չկա, կգտնվեն շատ մեծահարուստներ, որոնք կուզենան մեծ փողերով ձեռք բերել այդ ձեռագրերը, հրատարակել եւ շահույթներ ստանալ: Հիմա արդեն, երբ լույս տեսնեն Սելինջերի ձեռագիր ստեղծագործությունները, նրա ընթերցողը կվարձատրվի՝ իր համար բացահայտելով տասնամյակներ մեկուսացած Սելինջերի առեղծվածը:**

**Սելինջերը լույս տեսնելու օրվանից փնտրված է եղել, եւ անգամ մահը առիթ տվեց փնտրելու նրան՝ ես իմ պահարանում փնտեցի նրա գիրքը՝ մի անգամ էլ անցնելու սիրելի հատորի հերոսների աշխարհով: Եվ մեր կողմից էլ ընթերցողին խորհուրդ տանք՝ երբեւէ եթե հայտվեք անելանելի, անհույս կամ հուսահատ վիճակում, փնտրեք Սելինջերի գիրքը եւ սկսեք կարդալ. կտեսնեք, թե ինչպես է ձեր ավիշը լցվում նոր նյութով:**

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# Դավութօղլուի հետ հանդիպմանը Նալբանդյանը վերահաստատեց հայկական կողմի դիրքորոշումը

*1-ին էջից*

Դավութօղլուի մտահոգությունների հանդեպ պետքարտուղարի անտարբերությունն ու պետքարտուղարության խոսնակի հայտարարությամբ արտահայտված մոտեցումը հիմք են տվել «Զամանին» ենթադրելու, որ Վաշինգտոնը, համարելով չափազանցություն, ականջի հետեւն է գցում Անկարայի մտահոգությունները:

Ի դեպ, հունվարի 27-ին Լոնդոնում Դավութօղլուն հանդիպել է Հայաստանի, ապա եւ Ադրբեջանի արտգործնախարարների հետ, պետքարտուղար Քլինթոնը՝ միայն Էդվարդ Նալբանդյանի, իսկ ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը՝ ե՛ւ մեկի, ե՛ւ մյուսի հետ: Այլ կերպ, հայ-թուրքական Արձանագրությունները եղել են Աֆղանստանին նվիրված լոնդոնյան կոնֆերանսի առանցքային խնդիրը, որոնց շուրջը կազմակերպված հանդիպումներն ու ծավալված քննարկումներն իրենց կնիքն են թողել այդ կոնֆերանսի վրա:

Ինչ վերաբերում է Նալբանդյան-Դավութօղլու հանդիպմանը, դա նույնպես, ինչպես ԱՄՆ պետքարտուղարի հետ Թուրքիայի արտգործնախարարի հանդիպումն էր, տեւել է 15 րոպե: Նյու Յորքի «Թուրքական» կայքէջի վկայությամբ, կողմերը մտքեր են փոխանակել ՀՀ Սահմանադրական դատարանի՝ Արձանագրություններին առնչվող որոշման շուրջը: Դավութօղլուն նշել է, որ այդ որոշումը նոր իրավիճակ է ստեղծում հայ-թուրքական նորմալացման գործընթացի համար, իսկ Նալբանդյանը կրկնել է մինչ այդ արտահայտած կարծիքը, թե դա չի փոխում գործընթացի բնույթը: Թեեւ կողմերը հետամուտ են եղել որդեգրած դիրքորոշումներին, սակայն հայտարարվել է, որ հանդիպումը օգտակար էր:

Որքան էլ Նալբանդյան-Դավութօղլու 15-րոպեանոց հանդիպումը օգտակար համարվի, ակնհայտորեն ելման կետ է վերադառնում Հայաստանի եւ Թուրքիայի հարաբերությունների նորմալացման գործընթացը: Դրա հիմքում պաշտոնական Անկարայի հետքայլն է, պայմանավորված Լեռնային Ղարաբաղում «առաջընթաց» ապահովելու համար Վաշինգտոնի եւ Մոսկվայի միջոցով Հայաստանի վրա ճնշում բանեցնելու թուրքական հաշվարկների ձախողմամբ:

Ըստ երեւույթին ձախողվում է նաեւ հայ-թուրքական նորմալացման գործընթացում կատարված հետքայլը ՀՀ Սահմանադրական դատարանի որոշմամբ պայմանավորելու, այսպիսով գործընթացի ձախողման պատասխանատվությունը հայկական կողմի վրա բարդելու Թուրքիայի հաշվարկները, եւ ապարդյուն են անցնում որոշման մեջ թուրքական կողմի համար անընդունելի ցեղասպանության կետի առնչությամբ Հայաստանից նախապես իրավական գրավոր երաշխիքներ ստանալու Անկարայի ձեռնարկումները:

Դա անխուսափելիորեն կհանգեցնի Հայաստանի հարցում Թուրքիայի միջազգայնորեն մեկուսացմանը, քանի որ թուրքական կողմը հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմամբ շահագրգիռ միջազգային ուժերին զգուշացրել է, որ առանց Հայաստանից իրավական երաշխիքներ ստանալու չի կարող Արձանագրությունների վավերացմանն ուղղված քայլեր կատարել:

Մեկուսացման առումով թերեւս հատկանշականը Վաշինգտոնում ձեւավորվող հետեւյալ կարծիքն է. «Թուրքիան ի սկզբանե հակված չի եղել հայ-թուրքական հարաբերությունների նորմալացմանը, ուստի նա ստորագրված Արձանագրություններն ամբողջությամբ անվավեր ճանաչելու համար պատրվակ է փնտրում: Մինչդեռ Հայաստանն անշեղորեն կատարում է Արձանագրություններով ստանձնած պարտավորությունը», որն, ի դեպ, հունվարի 25-ի համարում մատնացույց էր արել «Սաբահ» թերթը:

## Խրամիճակ

ՋԱՎԱԽՔ

# Իսկության քամին սարսուռ է բերում...

Սա Ախալքալաքն է, երբեմնի հայահոծ Ջավախքի «չհռչակված մայրաքաղաքը»: Յուրահատուկ խորհուրդ ու չխամրող գեղեցկություն ունենն սակավ բարդիներն այս քաղաքի: Աբուլից եկող ձմռան դաղ քամու ճնչից տարեց բարդիներն այսօր էլ ահա խշշում են, որոնց ստվերի տակ վաղո՜ւց է լռել երիտասարդների սիրախաղը: Սա էլ քաղաքի երբեմնի մարդաշատ ու բանուկ փողոցներից մեկն է: Այս փողոցում քանի՜ տարի զուռնա չի հնչել, բանակ գնացող-վերադարձող որդու ուրախ հավաք չի եղել: Հարսանիք չի եղել: Եվ որքա՜ն ժամանակ է, որ բարդիների շուքի տակ անուշ ժպիտով հղի կանանց ճոճք չի երեւացել: Այս փողոցում վերջին մանուկը ե՞րբ է լույս աշխարհ եկել: Ծնունդ, կնունք ե՞րբ է եղել: Դժվարանում են հիշել: Փոխարենը՝ թաղում, ինչքա՜ն ուզես: Մեղա՜ քեզ, Տե՛ր, մեղա՜: Ջահելները հեռացան՝ ականջալուր օտարության շքեղ բարքերի կանչին, ահելները մեռան՝ զավակների ու թոռների կարոտը սրտներում:

Այս փողոցը, տեսքով՝ ուրիշ, ճակատագրով նման է քաղաքի շատ փողոցների: Չասեմ իրական անունը, որպեսզի ցավ չտամ հատուկենտ այն բնակիչներին, թե հանկարծ նրանց հասնեն իմ տողերը, բայց հազար անգամ նրանց ներողամտությունն եմ հայցում եւ աչքերիս լեզվով կոչում «Այրիների»: Եթե Սուրենյանցն էլ վրձներ թախծոտ պատկերն այս փողոցի, նա ուրիշ անուն չէր էլ մտորի: Իսկ թե Տերյանն այցի գար, հոգեխռով հետ կդառնար. «Մի մեծ փողոց, դատարկ ու անճիչ, վիրավոր ու անշուք...»: Եվ ինչպե՜ս պիտի մղկտար աշուղ Ջիվանին, որ հույսով մեռավ, թե «Ձախորդ օրերը, ձմռան նման կուգան ու կերթան...»:

Իսկության քամին սարսուռ է բերում. ձախորդ օրերը վաղո՜ւց են այստեղ տնավորվել ու չեն հեռանում....

Մի քանի տասնյակ տուն է ունեցել այս փողոցը, ավա՜ղ, այսօր կեսից ավելին դատարկ է ու փակ: Մի քանիսն էին անփական: Երբեմնի տասը-տասնհինգ, եւ ավելի, շունչ ունեցող տան վերջին ճրագն է փլփլում՝ հենված մեծ գերդաստանի վերջին սյունին՝ տարեց մամի (տատի) մաշված ուսերին: Այրիներն են մնացել՝ վերջին մոհիկանները՝ փականներն, անխինդ օջախների: Մի կիսաբաց դարպասից դեռ ոտքս ներս չէի դրել, անծանոթիս շունչը զգալով՝ գամփռը կատաղած դես ու դեն ընկավ: Շան հաչոցից տարեց մի կին դուրս եկավ թոնրատնից, լռեցրեց շանը եւ, ձեռքերը գոգնոցի փեշով սրբելով, ընդառաջ եկավ, մինչ ով լինելս ու այցից նպատակը հարցնելը ներս հրավիրեց: Հրաժարվեցի, եւ ոտքի վրա զրույցի բռնվեցինք. որպիսության հարցս նա փառավորեց աստվածավախ լեռնուհու հպարտությամբ՝ «Փառք Աստծո, լա՜վ եմ, բալա ջան: Լա՜վ...»: Ապա կանգ չառնելով՝ մոլորված հավքի պես պտույտ եկավ կանգնած տեղն ու հառաչանքով խփեց մաշված չոքերին. «Մա՜րդ չմնաց, բալա ջան, մարդ չմնա՜ց... հեռացա՜ն »:

«Լա՜վ եմ...»: Տատը հակասեց ինքն իրեն. մի՞թե մենությունը լավ է: Ինչո՞ւ է նա մենակ մնացել: Մի՞թե զավակները չեն կանչում, ինչո՞ւ չի գնում նրանց մոտ: Համառ է լեռնեցին. խլացել է որդու կանչին, հեռանալ չի ուզում, տան դուռը չի՛ փակում՝ թոռների դարձի հույսով: «Ամառը թոռներս կգա՜ն..., Դավիթս խոսք է տվել»: Ու այս էլ արդեն քանիերորդ ամառն է՝ թոռները գալիս են ու չե՜ն գալիս: Ի՞նչ է սա, եթե ոչ ինքնախաբեություն:

«Լա՜վ եմ...»: Լա՞վ: Է՜հ, ապրում է տատը հույսով: Եվս որքա՞ն կարող է հույսով ապրել, երբ նրա արեւը մայրամուտ է խոնարհվում. խամրել են աչքերը, խամրում է եւ հույսը: Վախենում եմ՝ չդիմանա... Ու եթե լույսը հարության դեղատոմսն է խամրող հույսի, ապա ո՞րն է դեղատոմսը հիասթափության: Չկա՛: Հիասթափությունը չունի՛ բալասան: Ի՞նչ պիտի անենք, եթե հույսը մատնվի հիասթափության: Ի՞նչ պատասխան պիտի տանք մեր գալիքին, մեր արդեն իսկ ունեցած խրթին պատմությանը. գործած մեր մեծ՝ ամենամեծ հանցանքի՝ անտարբերության համար, որ վաղ թե ուշ ծնունդ է տալու բացառապես հիասթափության:

Ո՞վ պիտի ականջալուր լինի Ջավախքի կանչին: Ո՞վ պիտի պատնեշի հայաթափության հեղեղը: Ցավի կանչն ու ողջերի ցասումը պահանջում են մեկ անգամ եւս շեփորել համայն հայությանը՝ «Փրկենք Ջավախքը»: Ո՞ւմ վրա է մեր հույսը: Տատի՞: Նրա՞: Այո՛, նա, մենության ցավից, վշտածով կարոտից ու անդարձ կորստից կռացած, լղար ուսերի վրա կպահի իր մարած թոնրատունը՝ իր բաժին Ջավախքը: Կպահի, սակայն մինչեւ իր կյանքի մայրամուտ: Ի՞նչ է լինելու հետո: Ո՞ւր մնացինք մենք: Ո՞րն էր եւ է մեր անելիքը: Մենք, որ չպատնեշեցինք արտագաղթի հեղեղն այդ հորդահոս, ոչ մեկին ետ չպահեցինք: Ու, անկասկած, չբոլորած եւս մեկ տասնամյակ Ջավախքը վերաբնակեցնելու մի մեծ խնդիր կունենանք առկա մեր ունեցածների կողքին: Այնուամենայնիվ, դեռ ուշ չէ անդարձ ուշացած լինելու համար:

Հարցս՝ քաղաքի վիճակի մասին, խնկարկեց վիշտը տատի. «Քաղաքը ժամանակին էր քաղաք, երբ ապրելու ցանկություն ու սիրելու երազ կար մարդկանց հոգիներում, խինդ ու ծիծաղ կար դեմքերին՝ աստվածաշուր կարմիր այտերին: Հիմա՞: Հիմա էլ ի՜նչ քաղաք. անունը կա. ամանումը չկա... Հոգեւոր կյանք ասվածն այլեւս անհասկանալի ընկալում է թե՛ քաղաքում եւ թե՛ գյուղում: Հեռու չէին այն տարիները, երբ վանքերը փակ էին, մարդիկ որտեղից որտեղ ավերված հարյուրամյա վանքերի հողածածկ բեկորներ՝ խաչքար ու սրբապատկեր էին գտնում, Սուրբ՝ Սրբատուն սարքում, մոմ վառում եւ առ Աստված աղոթք մրմնջում: Ինչքա՜ն մոմ եմ սարքել այս ձեռքերովս»:

Այո՛, ժամանակի հասարակարգը հոգեւորն էր զնդանել, բայց ոչ հոգիները: Քաղաքների մասին չեմ ասում, կա՞ր արդյոք մի գյուղ, որ մշակույթի տուն չունենար: Հիմա դրանք, դժբախտաբար, ի ցավ ինձ ու իմ ժողովրդին, ավելի հաճախ ծառայում են որպես հացատուն (հանգուցյալի հոգեհացի համար), քան թե հարսանատուն:

Ղողանջեցին եկեղեցու զանգերը՝ Ախալքալաքի Սուրբ Խաչն է: Պատարագ է եկեղեցում, բարձրաձայն մտածեցի: «Չէ՛, էս ժամին ի՞նչ պատարագ՝ Թիֆլիսի Սուրբ Գեւորգի բոթն է առել: Ընդվզում է.... Է՜հ, Սուրբ Գեւորգի պատերը չքանդեցին, մեր խաչակնող «աջը» կտրեցին, մեր վառած մոմերը փշրեցին...»:

Տատն արցունքը խեղդեց կոկորդում, բայց՝ ոչ աչքերում. դեմքով շրջվեց դեպի Սուրբ Խաչը, խաչակնքեց ու փառավորեց Ջավախքի հոգեւոր հովվին, ով, կուրծքը դեմ տված վրաց բացահաս հայակործան քաղաքականությանը, պայքարում է փրկել ջավախահայությանը հոգեորս աղանդներից: Ջավախքցին դեռ նոր էր սկսել վանքերն ու մատուռներն ազատել խորհրդային կապանքներից, աղանդները գրոհեցին անարգել. համազգային ենթագիտակցության հիմնաքարերն այստեղ էլ են խարխլվել. «Դե՛, եկ վարդապետս ու մի՛ խենթանա...»: Աղանդավոր հայերի շուրթերը աղոթք չեն մրմնջում հանուն բարձրյալի ու քաղաքակիրթ մարդկության, հանուն ազգի՝ ծնողի ու զավակի, հանուն հարազատի ու սիրած էակի: Այո՛, ազգակործան աղանդները, որ ականապատել են նաեւ Ջավախքը, վրաց պետական գործիչների ակնհայտ հակահայկական քաղաքականության հենասյունն են դարձել եւ ամեն վայրկյան պատրաստ են հիմնահատակ քանդելու արդեն իսկ խարխլված հայկական ընտանիքները: Ինչին թվացյալ հարեւանցիորեն, սակայն սրտի թրթիռով հետեւում ու սպասում են վրաց իշխանավորները: Մեր «դարավոր, բարի դրացիները», անգամ, եթե ոչ ծրագրողները, ապա անտարակույս իրագործողն են հրեշավոր այս ծրագրի: Ուզում եմ հասկանալ՝ մեզ էլ ի՞նչ է հարկավոր մեր հարեւանին ճանաչելու, նրա հետին մտքերը հասկանալու համար:

«Բարի՜» հարեւան, «դարավո՜ր» հարեւան. «Վանք չգնաց, գործը հաջողեց». գերտերությունների «բարի կամքով» հայոց բռնազավթված հողերի հաշվին իր սահմաններն ընդլայնեց: Եվ այսօր ամենավերջին ստահակի պես իրեն է վերագրում Ջավախքի հազարամյա տիրոջ իրավունքը:

Վարդերի հեղափոխականները վերանայեցին ու յուրովի թարմացրին վրաց պատմության ու աշխարհագրության դասագրքերը, իսկ Ջավախքում, ուր բնակչության գերակշիռ մեծամասնությունը հայեր են, հրաման իջեցրեցին՝ պարտադիր դադարեցնել «Հայոց պատմություն» եւ «Հայոց լեզու» առարկաների ուսուցումը: Մաշտոցյան տառերն այլեւս խորթ են տարրական դասարանի հայ երեխաների համար. մեր «դարավոր» դրացին մի ողջ սերունդ է արմատից՝ բազմադարյան պատմությունից ու մայրենիից կտրում... Հրեշավոր մի ծրագիր, որն իրականացրին ընդամենը մի քանի տարվա ընթացքում, եւ որն արմատները հեռուն է գցել: Իսկ վերջին ամիսներին «մեր եղբայր դրացին» հայ-վրացական պետական սահմանի վրա արգելում է հայերեն գրքերի մուտքը Ջավախք եւ անամոթաբար վկայակոչում պետական հրամանը: Մենք այստեղ էլ ոչինչ չենք անում ինքնաձեւակերպած սովորույթի համաձայն՝ լռեցինք եւ շարունակում ենք էլի լռել...: Սակայն, այստեղ, ոչ հարմար պահի ու առիթի, ի հայտ է գալիս հայի՝ աստվածավախ քրիստոնյայի կերպարը. բարեհոգությամբ ենք հատուցում «մեր բարի հարեւանի» ստոր արարքներին. վրացական մրգերով բեռնավորված հսկայական բեռնատար մեքենաներն անարգել Հայաստան ենք թողնում ու հետն էլ շուկաներում՝ «Էստի՜ համեցեք» կանչում:

Կամ աչքերս ենք փակում, որ ասենք՝ չենք տեսել, կամ ականջներս ենք փակում, որ ասենք՝ չենք լսել: Այնուամենայնիվ, ինքնախաբեության այս կեցվածքը արդարացում չէ:

Մինչ կգտնեի հուսադրող ու մխիթարող խոսքեր. տատը, հույսն իր վրա դրած, մայրական ծով համբերությամբ լցված, ինձ գոտեպնդեց (ինչը ես պիտի անեի). «Բալա, աշխարհն էսպես չի՜ մնա: Գիտե՞ս Հայաստանի, Մոսկվայի ու Լենինգրադի համալսարաններն ավարտած ինչքա՜ն խելացի ու հարուստ տղաք (երեխաներ) ունենք դուրսը, մի քանիսը հետ եկան թե չէ, մենք կփառավորվենք, կշենանանք: Մեր տղաքը հող սիրող, ծնող հարգող են: Նրանք են մեր հողի, մեր գլխի տերը՝ մեզ անտեր չեն թողնի: Ջավախքցին համեստ կյանքի է սովոր. մենք մեր վաստակով մարդավայել կապրենք, միայն թե մեր գլխին տեր լինի: Ա՜խ, թե մի քանիսը հետ գային: Կգա՛ն, կգա՛ն, մեզ անտեր չեն թողնի»:

Թերեւս անցյալն է հպարտանալու իրավունք ու ապրելու հույս տալիս ջավախքցուն. գիտնականների ու մտավորականների, տաղանդավոր արվեստագետների հսկայական մի զորաբանակ է տվել քաղաքակիրթ մարդկությանը՝ աշխարհին: ... Աշխարհին, որն իր խնդիրներն ունի: Կովկասին, որ բոլոր ժամանակների պես միշտ անհանգիստ է: Հայաստանին, որ լուռ ու անտարբեր է Ջավախքի ցավին: Վրաստանին, որ փասիանախավ իր գործն է անում:

Հայոց ցեղասպանություն: Լեռնային Ղարաբաղ: Ջավախք: Հայ - թուրքական Արձանագրություններ: Չլուծված խնդիրներ: Բայց ոչ անպատասխան: Անպատասխան խնդիր չի լինում. ճիշտ թե սխալ, մեկ է, ինչ-որ մի լուծում ունենալու է: Սակայն մենք իրավունք չունենք թույլ տալ, որ մեր ազգային խնդիրները լուծեն մեր փոխարեն: Մենք սխալվելու իրավունք չունենք...:

Ականջալուր լինենք աշխարհասփյուռ հայության կանչին, որտեղից էլ որ հնչի: Եվ չթողնենք, որ սպասումից աչքերը ջուր կտրեն:

Ջավախքը սպասում է...

ԶԵՄՍԱ ԲԱՂԴԱՅԱՆ

ԼՈՒՐԵՐ ՆԻՒ ԵՈՐՔԷՆ

# Կ'երթայ դառնալու առաջնորդ Մեծ Բրիտանիոյ հայոց թեմին

**Մ. Նահանգներու հայ եկեղեցւոյ Արեւելեան թեմին մէջ քսան տարիներու ծառայութենէ ետք, Վահան ծ. վրդ. Յովհաննէսեան անցեալ տարուան դեկտեմբեր 23-ին ընտրուելով Մեծ Բրիտանիոյ թեմի առաջնորդ, շուտով Լոնդոն պիտի մեկնի: Ան կը հովուէր Նիւ Եորքի Սրբոց Նահատակաց եկեղեցին, որ երրորդ մեծագոյն ծուխը ըլլալէ բացի, նաեւ ունի գործունէութեան լայն դաշտ:**

**Հայր Վահան, աւազանի անունով՝ Սարգիս, ծնած է 1963-ին, Բաղդադ: Որպէս մեքենաշինական ճարտարագէտ շրջանաւարտ ըլլալէ ետք, Իրաքի հայոց առաջնորդ Աւագ արք. Ասատուրեանի քաջալերանքով կու գայ Ամերիկա եւ կ'աւարտէ Ս. Վլադիմիր աստուածաբանական ճեմարանը եւ 1990-ին կը ձեռնադրուի վարդապետ Հայաստանեայց եկեղեցւոյ: Ունի աստուածաբանական, ինչպէս նաեւ՝ երաժշտական գործեր: Ֆորդհեմ համալսարանէն կը ստանայ իր դոկտորականը: Որպէս հովիւ ծառայած է Նիւ Եորքի Ս. Խաչ եւ Նիւ Ջերզիի Սրբոց Ղեւոնդեանց եկեղեցիներուն եւ շրջան մը եղած է լուսարարապետը Ս. Վարդան առաջնորդանիստ տաճարի:**

**Գաղութէն ներս իր ծառայութիւններով, արժանիքներով, լրջութեամբ, խոնարհութեամբ ու նուիրուածութեամբ կը վայելէ համայն գաղութին համակ սէրն ու համակրանքը: Մշակոյթի մարդ՝ ան ներկայ կը գտնուի Թէքէեան մշակութային միութեան մեծագոյն Նիւ Եորքի կազմակերպած թատերական ու մշակութային գրեթէ բոլոր ձեռնարկներուն:**

**Իր մեկնումին առիթով, յունուար 24-ին, Մանհասեթի (Նիւ Եորք) Քաունթրի քլաբի մէջ կը կազմակերպուի ողջերթի հաւաք աւելի քան 250 ներկաներու եւ ծխականներու ներկայութեան: Խօսք կ'առնեն Եղիշէ արք. Կիզիրեան, ծխական խորհուրդի ատենապետ Մայքըլ Զոհրապեան, Լին Չեթին, Կարպիս Մարթայեան, Ֆրենք Գաթարաճեան եւ յանուն առաջնորդ Խաժակ արք. Պարսամեանի՝ Հայկազուն ծ. վրդ. Նաճարեան: Խօսք կ'առնէ նաեւ հայր Վահանին երբեմնի ուսուցիչն ու բարեկամը՝ Փոլ Թարազի, յոյն ուղղափառ վարդապետը, բնիկ լիբանանցի:**

**Հանդէսի աւարտին սրտայոյզ ելոյթ կ'ունենայ Վահան վարդապետ ու ներկաները կը հրաւիրէ յաճախ այցելելու Անգլիա:**

**Հայր Վահան վարդապետ, տակաւին երիտասարդ, վստահաբար ունի կատարելիք մեծ գործեր մեր համայնքներէն թէ եկեղեցիէն ներս: Ան, հաւատարիմ Ս. Էջմիածնին, ամուր կերպով կը հաւատայ Մայր աթոռի անսասանութեան:**

**Բարի ճանապարհ սիրելի հայր սուրբին:**

ՅԱԿՈԲ ՎԱՐԴԻՎԱՌԵԱՆ

ՖՐԵԶՆՈ

# Հայկական ուսումնասիրությունների կենտրոնի նոր անդամը



**Հայերը վաղեմի կապեր ունեն աշխարհի ժողովուրդների հետ՝ ըստ դոկտ. Սերջիո լա Պորտայի, ով վերջերս միացել է Ֆրեզնոյի Կալիֆոռնիա համալսարանի հայկական ուսումնասիրությունների կենտրոնին: «Հայերն աշխարհի անբաժանելի մասն են եղել: 3000 տարի անց նրանք այն հազվագյուտ մշակույթներից ունեն, որոնք դեռ կենսունակ են: Քիչ մշակույթներ կարող են հպարտանալ, որ այդքան երկար ժամանակ շարունական ներկայություն են ունեցել եւ շարունական «մշակութային արտադրանք» են տվել», ասել է նա Երուսաղեմից (որտեղ դասավանդում էր եբրայական համալսարանում) Ֆրեզնո ժամանելիս:**

**«Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի համաձայն, նա միջճյուղային համագործակցության շնորհիվ բարձրացնելու է ավարտական կուրսերի ծրագրերի արդյունավետությունը: «Ճիշտ չէ հայկական ուսումնասիրությունները կատարել մեկուսացված վիճակում: Դրանք պետք է սահմաններից ու լեզուներից այն կողմ անցնեն, որպեսզի արդյունավետ լինեն», նշել է նա:**

**Անգլիական, հոլանդական եւ իտալական ծագումով Լա Պորտան խոստովանել է, որ նախ զբաղվել է հայկական թեմաների ուսումնասիրությամբ եւ հետո միայն հանդիպել իր ապագա կնոջը: «Դուստրս հիմա հաճախում է Ֆրեզնոյի հայկական վարժարանը», ասել է նա: Բակալավրի աստիճան է ստացել Կոլումբիա համալսարանից, իսկ հայկական ուսումնասիրությունների գծով դոկտորական է պաշտպանել Հարվարդ համալսարանում: Եբրայական եւ Օքսֆորդ համալսարաններում նա մասնագիտացել է հուդայականության, վաղ քրիստոնեության, ինչպես նաեւ սանսկրիտ եւ տիբեթյան լեզուների մեջ:**

Հ. Ծ.

AZG NEW PDF.qxd 1/29/2010 10:26 PM Page 1



# Աբխազիան պաշտոնապես հրավիրվել է Մոսկվա

Վրաստանը օրերս ներկայացնում էր Աբխազիայի եւ Հարավային Օսիայի առնչությամբ իր ծրագրերը՝ կարեւորելով, թե ցանկանում է այդ տարածքների ինտեգրում իր իրականության մեջ առանց զենքի կիրառման: Պարզաբանումն առավել քան պարզ էր ու գործնական՝ ելնելով ոչ վաղ անցյալի դառը փորձից նաեւ. Վրաստանը չի պատրաստվում պատերազմել Աբխազիայի եւ Հարավային Օսիայի դեմ:

Ինչեւէ, եւս մեկ անգամ Ռուսաստանի կողմից «խաղաղության պարտադրանքի» համար թանկ չվճարելուն բերող այսօրինակ որոշումը, ինչ կերպ էլ մատուցվի ու բացատրվի, հասկանալի է, որ ողջունելի ու միանշանակորեն սթափ մոտեցում է Վրաստանի կողմից: Սակայն որքան էլ Վրաստանում հայտարարեն, թե Աբխազիայի ու Հարավային Օսիայի հանդեպ դադարեցնում են մեկուսացումը, դա բնավ էլ չի նշանակի, թե այդ տարածքները համագործակցության նոր հարթություն դուրս կգան Վրաստանի հետ այն դեպքում, երբ այդ նույն համագործակցությունն ամենայն թափով զարգացվում է Ռուսաստանի հետ:

Երեք տարվա ընթացքում Ռուսաստանը Աբխազիային կհատկացնի 10 միլիարդ ռուբլի: «Գրուզիա օնլայն» կայքէջի տեղեկացմամբ, այդ մասին հայտարարել է Աբխազիայում Ռուսաստանի դեսպան **Սեմյոն Գրիգորեւը**:

Նրա վկայությամբ, այդ առնչությամբ համաձայնագիրը կնքվել է 2009թ. օգոստոսին Ռուսաստանի վարչապետ Վլադիմիր Պուտինի Սուխում այցի ժամանակ: Միայն 2010թ. հանրապետությանը կտրվի 1,9 միլիարդ ռուբլի: «Ռուսաստանի օգնությունը կգնա Աբխազիայի սոցիալական եւ տնտեսական ոլորտի բարելավմանը, թեեւ զարգացման իրական խթան պետք է դառնան ռուսական լուրջ ներդրումները, առաջին հերթին՝ միջին եւ խոշոր բիզնեսից», ասել է Գրիգորեւը:

Եվ սա դեռ ամենը չէ: Աբխազիայում Ռուսաստանի դեսպանի ներկայացմամբ, Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը պաշտոնական այցով Մոսկվա է հրավիրել Աբխազիայի նախագահ Սերգեյ Բաղապշին այն ժամանակ, երբ վերջինս արդեն կանցնի իր լիազորությունների կատարմանը: Հիշեցնենք, որ Աբխազիայում երկրի առաջնորդի ընտրություններն անցկացվել են նախորդ տարվա դեկտեմբերին՝ վերընտրությամբ արդեն իսկ գործող նախագահի:

Սեմյոն Գրիգորեւի խոսքերով, Ռուսաստանը եւ Աբխազիան փոխգործակցության բարձր մակարդակ են նախատեսում, նաեւ կապերի ամրապնդում խորհրդարանների եւ այլ գերատեսչությունների մակարդակով: «Աբխազական ղեկավարության հետ մենք երկու կարեւոր իրադարձություններ կնշենք. Աբխազիայի Ռուսաստանի հովանու ներքո 200 տարի գտնվելը եւ Հայրենական մեծ պատերազմի 65-ամյակը», հայտարարել է դեսպանը:

Ա. Հ.

# «Առաջին կովկասյան հեռուստաալիքը» այլեւս չի հեռարձակվում

Թբիլիսից հեռարձակվող «Առաջին կովկասյան հեռուստաալիքը» անջատվել է ֆրանսիական Eutelsat արբանյակից: Ալիքը, որի ստեղծման մասին «**Ազգ**»-ը գրել էր 2009-ի համարներից մեկում, պայմանագրային հիմունքներով աշխատել է 2010-ի հունվարի 15-28-ը: Հենվելով ալիքի տնօրեն **Ջուրաբ Դվալիի** խոսքերի վրա՝ BBC Russia-ն տեղեկացնում է, որ այժմ Փարիզում նշված ֆրանսիական ընկերության հետ տարվում են բանակցություններ՝ վերականգնելու հեռուստաալիքի հեռարձակումը: Դվալին, ընդ որում, հայտարարել է, որ այս միջադեպը կարող էր պատահել նաեւ Ռուսաստանի «միջնորդությամբ»:

Միեւնույն ժամանակ ֆրանսիական Le Figaro-ն նշում է, որ հեռուստաալիքի փակման մասին լուրեր կային դեռ երեքշաբթի օրը, երբ ֆրանսիական արբանյակի ֆիրմայի ներկայացուցիչը հայտնել էր թերթին, որ պայմանագրով նախատեսված ժամկետն ավարտվելու կապակցությամբ ալիքի հեռարձակումը կդադարեցվի:

Մնում է միայն տարակուսանք հայտնել, թե ի՞նչ իմաստ ուներ այդքան կարճ ժամանակահատվածի համար պայմանագիր կնքել, միգուցե իրո՞ք որեւէ մեկին ձեռնտու չի եղել հեռուստաալիքի գործունեությունը կամ տված լրատվության ուղղվածությունը:

Հիշեցնենք, որ ալիքը ստեղծվել էր Վրաստանի հանրային հեռուստաընկերության հիմքի վրա, իսկ որպես հիմնական նպատակ նշվում էր. «Ճշմարտության տարածումը Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մասին, մինչեւ Վրաստան, Հայաստան եւ Ադրբեջան, ինչպես նաեւ ճշմարտության տարածումը՝ Ռուսաստանի կազմում ապրող կովկասյան ժողովուրդների մասին, որոնք շարունակում են զինված պայքարը Կրեմլի դեմ»:

Հ. Ա.

# Վիլպենը շահեց Սարկոզիի հետ կապված դատը



Փարիզի քրեական դատարանը հանցակազմ չի գտել Ֆրանսիայի նախկին վարչապետ Դոմինիկ դը Վիլպենի գործողություններում եւ նրան արդարացրել է նախագահ Նիկոլա Սարկոզիին հասցեագրված զրպարտության գործի կապակցությամբ: «Ֆիգարո» թերթը հիշեցնում է, որ մեղադրող կողմը պահանջել էր Վիլպենին դատապարտել 1,5 տարվա պայմանական բանտարկության եւ 45 հազար եվրո տուգանքի:

Դատարանն արդարացրել է նաեւ ամբաստանյալ լրագրող Դեննի Ռոբերին: Միեւնույն ժամանակ EADS եվրոպական օդատիեզերական խմբի նախկին փոխնախագահ Ժան-Լուի Ժերժորենի հանցանքն ապացուցված է համարվել:

Վերջինս մեղավոր է ճանաչվել մատնություն կազմակերպելու, սարքովի փաստաթղթեր օգտագործելու, վստահություն չարաշահելու եւ վատնումների մեջ: Նույնպիսի մեղադրանքներ են ներկայացվել նաեւ մաթեմատիկոս Իմադ Լահուդին: Աուդիտոր Ֆլորիան Բուրժը մեղավոր է ճանաչվել վստահության չարաշահման մեջ: Բոլոր երեքը դատապարտվել են տարբեր ժամկետներով բանտարկության եւ դրամական տուգանքների:

Ֆրանսիացի մի շարք քաղաքական գործիչների դեմ ուղղված զրպարտչական արշավի գործի քննությունը սկսվել էր 2004-ին: Այն ժամանակ Ժերժորենը դատարանին ներկայացրել էր անձանց ցանկ, որոնք իբր Clearstream International ֆինանսական ընկերությունն օգտագործել էին փողերի լվացման նպատակով: Ցանկում նշված էր նաեւ ապագա նախագահ Սարկոզիի անունը:

Հետագայում պարզվել էր Ժերժորենի ներկայացրած ցանկի սարքովի լինելը: Նրան դատի էին տվել: Հայցվորներից մեկը Սարկոզին էր: Վիլպենը, որը նախագահական մրցարշավում նրա ախոյաններից մեկն էր, ամբաստանվել էր հանցակցության մեջ:

Դատավարությունը ծանր հարված հասցրեց նախկին վարչապետի քաղաքական կարիերային: Այժմ, երբ անմեղ է ճանաչվել, Վիլպենը հայտարարում է, որ 2012 թվականին ինքը կրկին պայքարելու է երկրի նախագահի պաշտոնում ընտրվելու համար:

# Ճգնաժամը մեծացրել է իտալական մաֆիայի շահույթը

Ընդհանուր ֆինանսատնտեսական ճգնաժամը նպաստել է իտալական մաֆիայի եկամուտների աճին, որի զուտ շահույթը 2009-ին ավելացել է 8 տոկոսով: Այդ մասին հաղորդվում է Իտալիայի փոքր ու միջակ գործարարության Confesercenti ընկերակցության զեկուցագրում, որը հրապարակված է դրա կայքէջում:

Զեկուցագրի հեղինակները գտնում են, որ «Մաֆիա Ինկորպորեյթեդը ամրապնդվում է որպես իտալական խոշորագույն ընկերություն»: Վերլուծաբանները իտալական հանցավոր սինդիկատների 2009 թ. ընդհանուր դրամաշրջանառությունը գնահատում են 135 մլրդ եվրո: Ընդսմին շահույթը կազմել է 78 մլրդ:

Ապօրինի գործարքների մեջ ամենամեծ բաժինը կազմում է թմրանյութերի, մարդկանց եւ զենքի մաքսանենգությունը: Զգալի եկամուտներ են բերում դրամաշորթությունը, անօրինական ներգաղթը, պոռնկությունը, դրամանենգությունը, փաստաթղթերի կեղծումը, կաշառքները եւ ընդհատակյա խաղատները:

Անօրինական գործողությունների արդյունավետությունն աճել է գործազրկության ներկայիս բարձր մակարդակի եւ աշխատուժի էժանացման պատճառով: Բացի դրանից, էժանացված ակտիվների գնումը դարձել է հանցավոր եկամուտների լվացման աղբյուրներից մեկը:

ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ

# 5-րդ սերնդի ռուսական կործանիչ

Ճակատային ավիացիայի 5-րդ սերնդի նորագույն կործանիչը հունվարի 29-ի վաղ առավոտյան փորձնական թռիչք է կատարել Ամուրի Կոմսոմոլսկի օդանավակայանից: Ինտերֆաքս գործակալությունը հաղորդում է, որ «Սուխոյ» ընկերությունում պատրաստված ռազմօդանավը թռել է բետոնե թռիչքուղուց, արագորեն բարձրացել՝ օդում մնալով 47 րոպե: «Առաջին թռիչքի համար նախատեսված բոլոր խնդիրները հաջողությամբ լուծված են», հայտարարել է «Սուխոյի» մամլո ծառայության ներկայացուցիչ **Օլգա Կայուկովան**:



Խոսելով ռուսական գիտության եւ կոնստրուկտորական մտքի «մեծ հաջողության» մասին, «Սուխոյի» գլխավոր տնօրեն **Միքայել Պողոսյանը** Ինտերֆաքսին ասել է, որ ծրագրի հետագա զարգացումը տեղի կունենա հնդիկ գործընկերների հետ համատեղ: «Ես վստահ եմ, որ մեր ընդհանուր նախագիծը «արժեք-արդյունավետություն» չափանիշով կգերազանցի արեւմտյան նմանակներին», ավելացրել է նա:

Պողոսյանի խոսքերով, ռուս-հնդկական կործանիչը «թույլ կտա ոչ միայն ամրապնդել Ռուսաստանի եւ Հնդկաստանի օդուժի զորությունը, այլեւ արժանի տեղ կգրավի համաշխարհային շուկայում»: Ենթադրվում է, որ «այդ օդանավերը 4-րդ սերնդի արդիականացված ավիացիոն համալիրների հետ կկանխորոշեն ՌԴ օդային ներուժը առաջիկա տասնամյակներին»:

# Մարդկանց օրգանների եւ երեխաների վաճառք Հաիթիում

Հաիթիի վարչապետ Ժան-Մաքս Բելռիվը CNN հեռուստաընկերությանը տված հարցազրույցում ասել է, որ մարդկանց օրգանների եւ երեխաների առեւտուրը դարձել է հունվարի 12-ի ավերիչ երկրաշարժի անուղղակի հետեւանքներից մեկը: Նրա խոսքերով, երկրում գոյություն ունի ինչպես մանուկների, այնպես էլ չափահասների օրգանների մաքսանենգություն:

Վարչապետը նաեւ նշել է, որ առկա է երեխաների մաքսանենգություն նաեւ որդեգրման նպատակով: Նա պատմել է, որ Հաիթիի իշխանությունները փորձում են անօթեւան երեխաներին հանձնել ընտանիքների եւ որբանոցների, բայց ներկայումս նրանց անօրինական դուրսբերումն ու որդեգրումը մնում են գլխավոր խոչընդոտներից մեկը: Բելռիվի խոսքերով, հաիթցի երեխաները ի վերջո հայտնվում են ԱՄՆ-ում:

Չնշելով, թե կղզուց ապօրինի ճանապարհով քանի երեխա է դուրս բերվել, Բելռիվը խոստովանել է, որ այդ հարցը կղզում եղել է նաեւ անցյալում: Plan International բարեգործական կազմակերպության տվյալներով, Հաիթիում դեռ երկրաշարժից առաջ եղել է մոտ 300 հազար անտուն երեխա, որոնք ապրել են որբանոցներում: ՅՈՒՆԻՍԵՖ-ի տվյալներով, ամեն տարի ապօրինաբար միայն հարեւան Դոմինիկյան Հանրապետություն տարվող երեխաների թիվը հասնում է 2 հազարի:

Պաշտոնական վերջին տվյալներով, երկրաշարժի զոհերի թիվն անցնում է 170 հազարից (այլ տվյալներով՝ 200 հազար), օթեւանից զրկվել է մոտ 2 մլն մարդ: Տուժածներին օգնում են աշխարհի երեք տասնյակ երկրներ: ՄԱԿ-ի տվյալների համաձայն, օգնության ընդհանուր գումարային արժեքը հասել է 562 մլն դոլարի:

# Սպառնալիքներ եւ փամփուշտ՝ Ճապոնիայի վարչապետին



Ճապոնիայի վարչապետ Յուկիո Հատոյաման ստացել է ծրար, որը պարունակում էր սպառնալիքներով լի նամակ եւ մի փամփուշտ: Ծրարը հայտնաբերվել է վարչապետի գրասենյակում: Նույնպիսի նամակ ստացել է կառավարող Դեմոկրատական կուսակցության գլխավոր քարտուղար Իտիրո Օձավան: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով Տոկիոյի ոստիկանությանը:

Վերջինիս տվյալներով, վարչապետին ուղարկված կասկածելի ծրարը հայտնաբերել է նրա թիկնապահը: Իշխանությունների անանուն ներկայացուցիչների վկայակոչելով, Ֆրանսպրեսը հավելում է, որ վարչապետին հասցեագրված նամակում եղել է մեկ բառ՝ «Մեռի՛ր»: Իսկ Օձավայի ստացած նամակում նշված է եղել, որ «թիրախը Օձավան է»:

Դեմկուսի գլխավոր քարտուղարը իրեն հասցեագրված նամակը գտել է Տոկիոյի իր նստավայրի փոստարկղում: Վերջերս համանման նամակներ ստացվել էին նաեւ կուսակցության կենտրոնակայանում եւ TV Asahi հեռուստաընկերության գրասենյակում:

Յուկիո Հատոյաման վարչապետի պաշտոնը զբաղեցրեց 2009-ի սեպտեմբերին՝ խորհրդարանական ընտրություններում իր կուսակցության հաղթանակից հետո: Ճապոնիայում ավելի քան 50 տարի կառավարած Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը այդ ընտրություններում պարտություն կրելով՝ դարձավ ընդդիմություն:

# Մշակույթ

***Հունվարի 20-ին լրացավ համաշխարհային կինոյի խոշոր վարպետներից մեկի՝ Ֆեդերիկո Ֆելինիի ծննդյան 90-ամյակը (20 հունվարի 1920-31 հոկտեմբերի 1993): Այդ կապակցությամբ ռուսական «Կուլտուրա» հեռուստաալիքը ցուցադրեց ռեժիսորի «Ամարկորդ», «Ջուլիետան եւ հոգիները» ֆիլմերը, ինչպես նաեւ «Հարցազրույցներ Ֆելինիի հետ» վավերագրական ֆիլմը: Թարգմանաբար ներկայացնում ենք անվանի ռեժիսոր Անդրեյ Տարկովսկու խոսքը Ֆելինիի մասին՝ տարիներ առաջ տպագրված ռուսական «Իսկուսստվո կինո» ամսագրում:***

## Անդրեյ Տարկովսկին Ֆեդերիկո Ֆելինիի մասին



Համաշխարհային կինոն անհնար է պատկերացնել առանց Ֆեդերիկո Ֆելինիի: Ոչ միայն այն պատճառով, որ նա տիպիկ իտալական երեւույթ է, այլեւ այն, որ նա հսկայական ազդեցություն է թողել համաշխարհային կինոարվեստի վրա: Ինչպես ամեն մի ճշմարիտ արվեստագետ, Ֆելինին պոետ է: Եվ ինչպես ամեն մի պոետ, նա մյուսներից տարբերվում է նրանով, որ ստեղծում է իր սեփական աշխարհը՝ արտահայտելու իր անձնական վերաբերմունքը ժամանակի հանդեպ:

Իմ տեսանկյունից, մեծ արվեստագետ պետք է համարել ոչ թե նրան, ով վերստեղծում է այս կամ այն երեւույթը, այլ նրան, ով իր աշխարհն է ստեղծում՝ արտահայտելու իր վերաբերմունքը նրա հանդեպ: Արվեստագետները ստեղծում են իրենց պայմանական աշխարհը: Եվ որքան սուբյեկտիվ եւ «անհատական» են եղել նրանք, այնքան խորն են ներթափանցել օբյեկտիվ աշխարհի մեջ: Հենց դա է արվեստի պարադոքսը: Այստեղ տեղ չունի օբյեկտիվ ճշմարտությունը, որը միշտ բացարձակ է եւ համապարփակ:

Ֆելինի արվեստագետը, ինչպես եւ իր ստեղծագործությունները, շատ դեմոկրատ են: Նրա զգացմունքները միշտ հասանելի են ժողովրդին: Դրանք զտված չեն: Պարզ են ու դյուրըմբռնելի, որովհետեւ ինքը հասարակ մարդ է՝ չափազանց մոտ ու հասկանալի իտալացի ժողովրդին: «Ամարկորդ», «Կաբիրիայի գիշերները», «Ճանապարհ» ֆիլմերում ակնառու են նրա կենսաճանաչողությունն ու կենսահայացքը: Նույնիսկ «Սատիրիկոն» ֆիլմը ստեղծվել է աշխարհի մասին պատմելու Ֆելինիի բուռն ցանկությունից:

Նրա զարմանալի բարոկկոն՝ հագեցած ռուբենսյան ժամանակներում շռայլորեն գործածված դետալներով, արտահայտում է նրա կենսուրախությունը, հախուռն խառնվածքը, լայնաշունչ էությունը եւ առողջ հոգին: Անկասկած, դա կենսունակ արվեստ է: Բայց դրա մասին ավելորդ կլիներ խոսել, եթե չլիներ ցանկությունը մեկ անգամ եւս պնդելու, որ յուրաքանչյուր արվեստագետի ստեղծածը միշտ հույս է ներշնչում՝ բացելով հոգեւոր հեռապատկերներ, եթե նույնիսկ նա ցանկացել է արտահայտել իր ժամանակի հասարակական ճգնաժամը: Խոսքը «Քաղցր կյանք» եւ «Կազանովները» ֆիլմերի մասին է: Մարդու հոգեւոր ճգնաժամի մասին նա պատմում է այնպիսի սիրով, որ ֆիլմի վերջնամասը հակադրվում է սկզբնական գաղափարին: Ֆելինին չափազանց բարի մարդ է: Չի եղել այնպիսի դեպք, որ նա մերժեր իրեն օգնելու խնդրանքով դիմած երիտասարդ կինեմատոգրաֆիստներին կամ իր ընկերներին: Դա վկայում է նրա մեծության եւ անշահախնդրության մասին: Թերեւս ժամանակակից արվեստագետներից ոչ ոք չի կարողացել այդքան խորությամբ արտահայտել ճգնաժամի մեջ գտնվող ստեղծագործող անհատի խնդիրները, ինչպես Ֆելինին իր «8 1/2» ֆիլմում: Հոգնած եւ անօգնական վիճակում հայտնված ռեժիսորի պատմությունը հիմք է դարձել գունագեղ ֆիլմի: Դա խորապես լիրիկական կինոնկար է, որը չի նվազեցնում ոչ հերոսների, ոչ էլ ասելիքի նշանակությունը: Ընդհակառակը, ինձ թվում է, որ դա լավագույն ֆիլմն է, որտեղ ասելիքի խորությունն ու նրբությունը միահյուսվում են ժողովրդին բնորոշ պարզության հետ: Ամեն դեպքում, «8 1/2» -ը իմ ամենասիրած ֆիլմն է:

Շփման մեջ Ֆելինին շատ հասարակ է, սակավախոս, մեղմ ու քնքուշ մարդ է: Եվ չափազանց հմայիչ է, ոչ թե այդ բառի դերասանական իմաստով, այլ զուտ մարդկային: Գիտի ինքն իրեն գնահատել եւ դրանով էլ ավելի զորացնել ընկերներին օգնելու ցանկությունը: Նրա մոտ գալիս են տարբեր մարդիկ, բազում խնդրանքներով՝ Իտալիայի բոլոր անկյուններից: Օրինակ, պատահել է, որ Ֆելինիի մոտ եկած տղամարդը խնդրել է օգնել բանտարկված որդուն ազատ արձակելու հարցում: Ֆելինին դիմել է պետական մարմիններին, խոսել է այդ գործին տեղյակ մարդկանց հետ: Այդպիսի խնդրանքներն այնքան շատ են եղել...

Իտալիայում նրան ճանաչում են, փողոցում հանդիպելիս բարեւում: Կարծում եմ, նա իր երկրի ամենահայտնի մարդն է: Մարդիկ հետապնդում են նրան, ու նա հաճախ ստիպված է հեռախոսով խոսել կանացի ձայնով՝ իբրեւ իր սպասուհին: Ի դեպ, այնպես է տարվում իր կերպարանափոխմամբ, որ հեռախոսով ուրիշի անվան տակ մասնագիտական երկարատեւ զրույցներ է ունենում:

Ֆելինիի ամեն մի ֆիլմը ինձ համար չափազանց կարեւոր է: Հասարակ մարդու հմայիչ, հասուն ու զգացական աշխարհի եւ արվեստի մարդու պոետիկ, նուրբ ու բարդ աշխարհի համադրությունը նրա ստեղծագործությունները դարձնում է բացառիկ եւ անկրկնելի:

Նրա քնքշությունն ու հոգու նրբությունը ակնառու են «Ծաղրածուները», «Հռոմ», «Ամարկորդ» ֆիլմերում, որտեղ նա դառնում է թույլ ու խեղճ մարդկանց պաշտպանը: Ավելի ճիշտ, այդ մարդիկ դառնում են նրա ստեղծած իրական կյանքի կենտրոնական դեմքերը:

Կարող է թվալ, թե Ֆելինին բավականին հարուստ մարդ է: Ըստ ամենայնի, նա կարող էր այդպիսին լինել, եթե ընդուներ շահավետ կոմերցիոն առաջարկները իտալացի եւ ամերիկացի խոշոր պրոդյուսերների կողմից: Բայց նա միշտ գերադասել է վճարել իր ստեղծագործական ազատության համար:

Կարելի է վստահաբար ասել, որ քանի դեռ Ֆելինին անում է այն, ինչ ուզում է, իտալական կինոյին վիճակված է մնալ գեղարվեստական պատշաճ մակարդակի վրա:

Այնպիսի իրադրության մեջ, երբ գումար չկա նկարահանելու իսկական իտալական ֆիլմեր, երբ ոչ ոք չի ուզում զբաղվել արվեստով, երբ չքացել են անշահախնդիր մեկենասները, բոլոր հայացքներն ու հույսերը ուղղված են այնպիսի վարպետներին, ինչպիսին Ֆելինին է: Եվ ես հավատում եմ, որ իտալական կինոն իր մեջ ուժ կգտնի նոր շնչառություն ստանալու:

**Ըստ «Իսկուսստվո կինո» ամսագրի պատրաստեց**
**ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԸ**

## Այլեւս չկա հրեշտակային գեղեցկությամբ Վարենյան



**Ստենլի Կուբրիկի հանրահայտ ու մեծապես հաջողված «Սպարտակ» (1960) ֆիլմում Վարենյայի նուրբ կերպարը մարմնավորած Ջին Սիմոնսը հունվարի 22-ին վախճանվեց Սանտա Մոնիկայի (Կալիֆոռնիա) իր տանը: Ծնվել էր 1929-ի հունվարի 21-ին Լոնդոնում: Սկսել էր նկարահանվել 14 տարեկանից: Լոուրենս Օլիվիեի «Համլետում» (1948) Օֆելյայի դերակատարման համար 18 տարեկանում առաջադրվել է «Օսկար» մրցանակի: Իր գեղեցկությամբ եւ անմեղությամբ գրավել էր հազարավոր մարդկանց սրտերը:**

**Նրա մոտ 70 ֆիլմերից կարելի է հիշատակել «Հրեշտակային դեմքը» (1952), «Թիկնոցը» (1953), որն առաջին լայնէկրան ֆիլմն է եւ պատմում է Քրիստոսի խաչելության մասին, «Եգիպտացին» (1954), «Դեզիրեն» (1954), «Տղաներ եւ աղջիկներ» (1955), «Մեր երկիրը» (1958), «Էլմեր Գենտի» (1960), «Խոտը ավելի կանաչ է» (1960), «Փշաթուփերի թռչունները» (1983), «Մեծ ակնկալիքներ» (1989) եւ «Սթար Տրեկ: Հաջորդ սերունդը» (1991): Վերջին անգամ նկարահանվել է «Ստվերներ արեւի տակ» (2008) ֆիլմում: Մոտ 10 անգամ առաջադրվել է տարբեր մրցանակների, ստացել է «Էմմի» մրցանակը «Փշաթուփերի թռչունները» սերիալում երկրորդական լավագույն դերի համար, իսկ դրանից առաջ «Ոսկե գլոբուս» մրցանակը՝ «լավագույն երաժշտական/կատակերգական դերասանուհի» անվանակարգում «Տղաներ եւ աղջիկներ» ֆիլմի համար: Արտասովոր գեղեցկության հետ գնահատվել է նաեւ դերասանական տաղանդը: «Նա իր ժամանակի ամենատաղանդավոր եւ առինքնող դերասանուհին է», ասել է նրան հայտնաբերած գրող-ռեժիսոր Վալ Գեստը:**

**Հ. Ծ.**

ՏԱՐԵԴԱՐՁ

## Հարություն Խաչատրյանի 55-ամյակը նշվեց «Սահման» ֆիլմի ցուցադրությամբ

«Ոսկե ծիրան» կինոփառատոնի հիմնադիր տնօրեն, կինոռեժիսոր **Հարություն Խաչատրյանի** ծննդյան 55-ամյակի կապակցությամբ «Մոսկվա» կինոթատրոնում երեկ ցուցադրվեց նրա «Սահման» ֆիլմը, որը մասնակցել է բազմաթիվ միջազգային հեղինակավոր կինոփառատոների՝ արժանանալով բարձրագույն պարգեւների. Անթալիայում՝ գլխավոր մրցանակ, Հյուսթոնում՝ Պլատինում Ռեմի, Սիրակուզիում «լավագույն լիամետրաժ վավերագրական ֆիլմ» մրցանակ, Թբիլիսիում՝ Եվրոմիության մրցանակ եւ այլն:

**«Ազգը»** շնորհավորում է Հարություն Խաչատրյանին ծննդյան տարեդարձի եւ ֆիլմի ցուցադրության կապակցությամբ:

## Հոլմսի «ժառանգները» իրավական խճճված ցանցում

**Հանրահայտ խուզարկու Շերլոկ Հոլմսն առ այսօր խիստ արժեքավոր եւ եկամտաբեր գրական կերպար է, թեպետ ոչ ոք տեղյակ չէ, արդյո՞ք նա երբեւէ վարձատրվել է իր բացահայտած «գործերի» համար: Նրա արկածները դեռեւս մեծ շահույթ են ապահովում իրեն ստեղծողի՝ Արթուր Կոնան Դոյլի (1859-1930) ժառանգներին: Այդ շարքի վերջին ստեղծագործությունը ռեժիսոր Գի Ռիչիի «Շերլոկ Հոլմս» ֆիլմն է, որն այժմ ցուցադրվում է ամբողջ աշխարհում: Ըստ «Գարդիանի», արդեն վաճառվել է 311 մլն դոլարի տոմս, իսկ անցյած կիրակի հայտնի դարձավ, որ ֆիլմում հանդես եկող դերասան Ռոբերտ Դաունի կրտսերն արժանացել է «Ոսկե գլոբուս» մրցանակի:**



**Իր հասուն տարիքում միանգամայն բնական կլիներ, որ Հոլմսը հանրության սեփականությունը դարձած լիներ, սակայն նրա կերպարը ոչ միայն պահպանում է իր «հեղինակային իրավունքը» Մ.Նահանգներում, այլեւ վերջին 80 տարիների ընթացքում հայտնվել է սեփականության հարցերի ճշգրտման այնպիսի խճճված ճիրաններում, որ, ըստ Կոնան Դոյլի կալվածների գրական բաժնի ամերիկացի ներկայացուցիչ Ջոն Լելենբերգի, «փաստաբանները, մինչեւ անգամ բրիտանացի փաստաբանները, չեն կարողանում գլուխ հանել այդ ամենից»:**

**Դոյլի մահվանից հետո նրա գրական ժառանգության խնամակալությունը հանձնվել է երկրորդ կնոջից՝ Ջինից ունեցած 3 զավակներին՝ Դենիսին, Ադրիանին եւ Ջինին: Դենիսը մինչեւ իր մահը (1955-ին) առաջինն է ձեռնարկել Հոլմսի կերպարի էկրանավորումները: Դրանց մի մասը մնայուն արժեքներ են (ինչպես Բեյսիլ Ռաթբոունի եւ Իգոր Մասլենիկովի ֆիլմերը), իսկ մյուսները՝ անցողիկ (ինչպես Ռոնալդ Հոուարդի դերակատարմամբ 1954-ի հեռուստասերիալները): Գրական հարստությունը հետո անցել է նախ Ադրիանին (մահացել է 1970-ին), իսկ հետո՝ Ջինին, որը հոր մահվան ժամանակ 17 տարեկան է եղել:**

**Դենիսի այրին՝ Նինան բավականին երկար ժամանակ պայքարել է ունեցվածքի վերահսկողությանը տիրանալու համար եւ դատական գործը շահելուց հետո հիմնել է «Բասկերվիլ ինվեստմընս» ՍՊԸ-ն, որը հետագայում ընկել է ֆինանսական շիլաշփոթի մեջ: Շոտլանդական «Ռոյալ բանկը» ստանձնել է ընկերության դատական կատարածուի դերը եւ 1976-ին Կոնան Դոյլի ունեցվածքի իրավունքները վաճառել է ամերիկացի պրոդյուսեր Շելդոն Ռեյնոլդսին: Վերջինս նկարահանել է Շերլոկ Հոլմս հեռուստասերիալը, բայց շատ ժամանակ չի ունեցել օգտվելու ձեռքբերածից:**

**Շերլոկ Հոլմսն ու Կոնան Դոյլի մյուս գործերը Բրիտանիայում հանրային սեփականություն դարձան 1980-ին, սակայն Մ.Նահանգներում 1976-ին ընդունված հեղինակային իրավունքի օրենքը հնարավորություն տվեց գրքերի հեղինակներին կամ նրանց ժառանգներին վերականգնելու իրենց իրավունքները: Հենց դրանից էլ 1981-ին օգտվեց Դոյլի դուստրը՝ Ջինը: Նա արդեն թոշակառու օդային պարետ էր, ծառայել էր Մ. Նահանգների կանանց ռազմա -օդային ուժերում, չափազանց հավատարիմ էր հոր գրական ժառանգության հանդեպ, երբեմն էլ՝ սաստիկ քմահաճ: Նա թույլտվությամբ են լիցենզավորվել «Երիտասարդ Շերլոկ Հոլմսը» եւ «Առանց ելք գտնելու» վերնագրերով ոչ ավանդական, փորձարարական ֆիլմերի նկարահանումները: Իր մահվանից առաջ (1997-ին) Ջինը հոր հեղինակային իրավունքները հանձնել է «Կույրերի արքայական ազգային ինստիտուտին», որն էլ իր հերթին այդ իրավունքը վաճառել է Դոյլի ժառանգներին:**

**Վերջին տարիներին նրանց պատկանող ընկերությունը թույլատրել է գրական կերպարներին օգտագործել ծննդյան տոների ու գերբնական թեմաներով առեղծվածային պատմվածքների հավաքածուների համար (օրինակ, «Հոլմսը ծննդյան տոներին» եւ «Ուրվականներ Բեյքեր սթրիթում» հատորները): Ըստ Լելենբերգի, վամպիրների վերաբերյալ պատմությունները չափազանց այժմեական են»:**

**Ինչպես Հոլմսն է շարունակում մնալ հանրային ուշադրության կենտրոնում, այնպես էլ նրա հեղինակային իրավունքների հանդեպ մարտահրավերները:**

**1990-ականներին սկսած դատական գործերում կան այնպիսիք, որ ամերիկացի պրոդյուսեր Ռեյնոլդսի նախկին կինը՝ Անդրեա Պլանկետն է հարուցել Կոնան Դոյլի կալվածքների եւ ընկերությունների դեմ, պնդելով, որ նրանք ոտնահարել են կերպարների օգտագործման վերաբերյալ իր իրավունքները: Նա ասել է, որ իր ընտանիքը ժամանակին ձեռք է բերել Դոյլի ունեցվածքը, իսկ ամուսնուց բաժանվելուց հետո այդ իրավունքը պատկանում է իրեն: Դաշնային դատարանները նրա դեմ բազմիցս վճիռներ են կայացրել՝ մերժելով Շերլոկ Հոլմսի անունը որպես ապրանքանիշ օգտագործելու նրա պահանջները: Նա բողոքել է այդ որոշումների ու նաեւ այն բանի դեմ, որ ոչ ոք իրենից խորհուրդ չի հարցրել նոր ֆիլմի նկարահանման ժամանակ: Նա խոստովանել է, որ քիչ առնչություն ունի «Ուորներ եղբայրների» թողարկած Ռիչիի նոր ֆիլմի հետ:**

**Ներկայումս Դոյլի 9 ժառանգներ են ապրում Մ.Նահանգներում, բայց նրանցից ոչ մեկը աշխարհահռչակ հեղինակի անմիջական հետնորդը չէ: Ըստ Լելենբերգի, Շերլոկ Հոլմսի կերպարը օգտագործելու հեղինակային իրավունքը ուժի մեջ է մինչեւ 2023 թվականը:**

**Պատրաստեց**
**Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆԸ**

ԱԶԳ Մարզական

# Գրիգորյանը ժամկետից շուտ գրանցեց չեմպիոնությունը

Շախմատի Հայաստանի տղամարդկանց առաջնության նախավերջին՝ 8-րդ տուրն անվանեց հանրապետության նոր չեմպիոնին: Վերելքով հանդես եկող գրոսմայստեր Ավետիք Գրիգորյանը հաղթելով Դավիթ Քալաճյանին, վաստակեց 6,5 միավոր ու ժամկետից շուտ, իր կարիերայում առաջին անգամ հռչակվեց ՀՀ չեմպիոն: Առաջնության արծաթե եւ բրոնզե մեդալակիրները հայտնի կդառնան այսօր կայանալիք ավարտական տուրում:



ՖՈՏՈԼՈՒՐ

5-ական միավորով 2-3-րդ տեղերն են բաժանում Տիգրան Պետրոսյանը եւ Զավեն Անդրեասյանը: Զավենը ոչ-ոքի խաղաց Տիգրան Քոթանջյանի հետ, Տիգրանը հաղթեց Դավիթ Պետրոսյանին: Մրցանակակիր դառնալու հնարավորություն ունեն նաեւ 4,5 միավոր վաստակած Արտաշես Մինասյանն ու Ռոբերտ Հովհաննիսյանը, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Արթուր Չիբուխչյանին եւ Հրանտ Մելքումյանին:

Կանանց մրցաշարում ավարտական տուրից առաջ բավական խճճված իրավիճակ է: Սիրանուշ Անդրեասյանն ու Լիա Մարտիրոսյանը 5,5 միավորով գլխավորում են աղյուսակը: Անդրեասյանը հաղթեց Մարիաննա Գասպարյանին, Մարտիրոսյանը պարտության մատնեց Վարդուհի Քալաճյանին: Առաջատարներին կես միավոր է զիջում Անահիտ Խառասյանը, որն առավելության հասավ Նարինե Գասպարյանի նկատմամբ: Նաիրա Մովսիսյանը եւս մոտեցավ առաջատարներին՝ հաղթելով Անի Խանամիրյանին: Նաիրան վաստակեց 4,5 միավոր: Աննա Հայրապետյանն էլ հաղթեց Լուսինե Կարապետյանին:

Չեմպիոնության համար մղվող պայքարում վճռորոշ կլինեն ավարտական տուրում կայանալիք Անդրեասյան-Խառասյան, Հայրապետյան-Մարտիրոսյան, Մովսիսյան-Մարիաննա Գասպարյան պարտիաները:

# Կլիչկոյին կդիմագրավի Չեմբերսը

**IBF-ի եւ WBO-ի վարկածներով գերծանր քաշային կարգի աշխարհի չեմպիոն Վլադիմիր Կլիչկոն իր տիտղոսների հերթական պաշտպանությունը կիրականացնի մարտի 20-ին Դյուսելդորֆում Էդի Չեմբերսի հետ կայանալիք մենամարտում: Մենամարտը կանցկացվի Դյուսելդորֆի 51 հազարանոց մարզադաշտում, որտեղ իր հանդիպումներն է անցկացնում Լեւերկուզենի «Բայերը»:**



**«Մենամարտն անցկացվելու է հսկայական մարզադաշտում: Կարծում եմ, որ լեփ-լեցուն տրիբունաներն ինձ լրացուցիչ լիցք կհաղորդեն: Չեմբերսն ամերիկացի գործող գերծանրքաշայիններից ամենաուժեղն է: Նա արժանիորեն է զբաղեցնում առաջին հորիզոնականը WBO-ի վարկածով դասակարգման ցուցակում: Չեմբերսին լավ եմ ճանաչում: Ժամանակին նրա հետ համատեղ մարզվել եմ: Նա զգալի առաջընթաց է ունեցել, ուստի չի կարելի թերագնահատել նրան: Դա մեծ սխալ կլինի: Հիշեք, թե Չեմբերսն ինչպես հաղթեց Ալեքսանդր Դմիտրենկոյին, որն ինձանից ավելի բարձրահասակ էր: Պովետկինից կրած պարտությունից նա ճիշտ հետեւությունների էր հանգել», նշել է Կլիչկոն:**

**«Շատ եմ աշխատել, որպեսզի տիտղոսի համար պայքարելու հնարավորություն ստանամ: Մտադիր եմ Կլիչկոյին էլ զարմացնել այնպես, ինչպես դա արեցի նրա հայրենակից Ալեքսանդր Դմիտրենկոյի հետ: Ցանկանում եմ նվաճել նրա գոտիները: Այդ հնարավորությունը ձեռքիցս բաց չեմ թողնի», հայտարարել է Չեմբերսը:**

**Չեմբերսի հետ մենամարտի նախապատրաստությունը Կլիչկոն կսկսի հաջորդ շաբաթվանից, Եվրոպայում: Անցած տարի նա ընդամենը մեկ մենամարտ էր անցկացրել՝ մրցելով Ռուսլան Չագաեւի հետ:**

**Վլադիմիր Կլիչկոն պարտավոր է նաեւ IBF-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը պաշտպանել Ալեքսանդր Պովետկինի հետ մենամարտում: Վերջինիս մենեջեր Վլադիմիր Խրյունովը տեղեկացրել է, որ առայժմ բանակցությունները Կլիչկոյի հետ դադարեցվել են: Նա հույս է հայտնել, որ Կլիչկոն ի վերջո կպատրի իր պարտավորությունները եւ ռինգ դուրս կգա Պովետկինի հետ: Հիշեցնենք, որ անցած տարվա հոկտեմբերին IBF-ի ղեկավարությունը Կլիչկոյի համար նոր ժամկետ էր սահմանել, որի ընթացքում նա պետք է պաշտպանի իր տիտղոսը:**

# «Փարավոնները» վրեժխնդիր եղան

**Ֆուտբոլի Աֆրիկայի գավաթի խաղարկությունում հայտնի դարձան եզրափակիչի մասնակիցները: Վաղը կայանալիք եզրափակիչ խաղում պատվավոր մրցանակը կվիճարկեն Եգիպտոսի եւ Գանայի հավաքականները: Եգիպտացիները հիանալի հնարավորություն են ստացել աֆրիկյան ֆուտբոլի պատմության մեջ դառնալու յուրօրինակ ռեկորդակիրներ՝ 3-րդ անգամ անընդմեջ նվաճելու գավաթը:**

**Կիսաեզրափակիչ հանդիպումներից հատկապես մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Եգիպտոսի եւ Ալժիրի հավաքականների մրցավեճը: Անհաշտ մրցակիցները նոյեմբերին մրցել էին աշխարհի առաջնության ուղեգրի համար կայացած լրացուցիչ խաղերում: Ուղեգիրը բաժին հասավ ալժիրցիներին: Կահիրեում եգիպտացի ֆանատները քարկոծել էին Ալժիրի հավաքականի ավտոբուսը: Ի պատասխան դրան, Սուդանում կայացած խաղում ալժիրցի ֆանատները հարձակվել էին եգիպտացիների վրա:**

**Նկատի ունենալով անցած տարի տեղի ունեցած միջադեպերը, որի պատճառով երկու երկրների միջեւ հարաբերությունները խիստ լարվել էին, Աֆրիկայի գավաթի խաղարկության կազմակերպիչներն անվտանգության խիստ միջոցներ էին ձեռնարկել Բենգելայում: Դեռեւս խաղի նախօրյակին մարզադաշտ տանող բոլոր ճանապարհներին ռազմական մեքենաներ էին կանգնեցրել, բանակային զորամիավորումները խիստ հսկողության տակ էին առել 2 հավաքականներին:**

**Եգիպտոսի հավաքականը վրեժխնդիր եղավ ալժիրցիներից: «Փարավոնները» պարզապես ջախջախեցին մրցակցին՝ 4 անպատասխան գնդակ ուղարկելով ալժիրցիների դարպասը: Հաշիվն առաջին խաղակեսում 11 մ հարվածով բացեց Աբդ-Ռաբուն: Ընդմիջումից հետո աչքի ընկան Մոհամեդ Զիդանը, Աբդել Շաֆին եւ Գեդոն:**

**Գանայի եւ Նիգերիայի հավաքականների մրցավեճում ընդամենը մեկ գոլ խփվեց: Գանացիներին հաղթանակ պարգեւեց Գյանի խփած միակ գնդակը: Նիգերիայի հավաքականն այսօր բրոնզե մեդալների համար պայքարում կմրցի Ալժիրի ընտրանու հետ:**

## Մովսիսյանն առաջատարների շարքում է

**Ջիբրալթարի շախմատի մրցաշարում հաջող է հանդես գալիս Սերգեյ Մովսիսյանը, որը 3 տուրից հետո 2,5 միավորով առաջատարների շարքում է: 3-րդ տուրում Մովսիսյանը սպիտակներով հաղթեց ֆրանսիացի Գաբրիել Բատագլինիին:**

**3-ական միավորով առաջատարներն են Մայքլ Ադամսը, Լաուրենս Ֆրեսինետը եւ Յան Գուստաֆսոնը: Ադամսը հաղթեց Սթելիոս Հալկիասին, Ֆրեսինետը պարտության մատնեց Սպիրիդոն Կապնիսիսին, իսկ Գուստաֆսոնն առավելության հասավ Նանա Ձագնիձեի նկատմամբ:**

## Կոբի Բրայանտը մրցակցությունից դուրս է

**ԱՄՆ-ի բասկետբոլի ազգային ընկերակցությունը հրապարակել է այն բասկետբոլիստների ցանկը, որոնց ազգանուններով մարզաշապիկները բոլորից շատ են վաճառվում ընթացիկ մրցաշրջանում: Մրցակցությունից դուրս է «Լեյկերսի» պաշտպան, նախորդ առաջնության ամենաարժեքավոր խաղացող Կոբի Բրայանտը, որն առաջատարն է դեռեւս նախորդ մրցաշրջանից սկսած:**

**Ցուցակում 2-րդ հորիզոնականը զբաղեցնում է «Կլիվլենդի» հարձակվող Լեբրոն Ջեյմսը, որին հաջորդում է «Օռլանդոյի» առաջատար Դուայտ Հովարդը: Նախորդ առաջնության լավագույն նորեկ Դերիկ Ռոուզը «Չիկագոյից» ընթանում է 4-րդ տեղում: Լավագույն հնգյակը եզրափակում է «Մայամիի» խաղացող Դուեյն Ուեյդը: Իսկ ահա Շաքիլ Օ՛Նիլը 9-րդն է:**

ՀՈԲԵԼՅԱՆ

# Սուրեն Բաղդասարյանը 70 տարեկան է

**Լրացավ Հայաստանի մարզական լրագրության ավագ սերնդի ներկայացուցիչներից մեկի՝ Սուրեն Բաղդասարյանի ծննդյան 70-ամյակը: Իր կյանքի շուրջ 40 տարիները նա նվիրել է հայկական եւ համաշխարհային սպորտի իրադարձությունների լուսաբանմանը: Այսօր դժվար է ստույգ նշել նրա վարած ռեպորտաժների, գրած հոդվածների թիվը: Մարզական մեկնաբանի եւ լրագրողի նրա անցած ուղին միշտ չէ, որ հարթ է եղել: Ոմանց դուր չեն եկել Սուրեն Բաղդասարյանի հոդվածներում բարձրացված որոշ հարցերը, քննադատությունը, որի հետեւանքով փորձել են նույնիսկ հաշվեհարդար տեսնել նրա նկատմամբ: Սակայն Բաղդասարյանը հավատարիմ սկզբունքներին, շարունակել է իր գործը նույն եռանդով ու ջանասիրությամբ:**



**Կարելի է փաստել, որ Սուրեն Բաղդասարյանը բախտավոր աստղի տակ է ծնվել, քանի որ նրա մեկնաբանական գործունեությունը համընկել է ԽՍՀՄ առաջնություններում Երեւանի «Արարատի» փայլուն ելույթներին: Նրան բախտ վիճակվեց փոխարինել մեր անվանի մեկնաբան Լեւոն Դանիելյանին, որը ժողովրդի սերն ու հարգանքն էր վայելում: Իհարկե, դժվար էր միանգամից արժանանալ ֆուտբոլասերների համակրանքին: Դա ձեռք բերվեց տարիների քրտնաջան աշխատանքի, ինչու չէ՝ նաեւ «Արարատի» հաջող մրցելույթների արդյունքում: Հատկանշական է, որ հենց Սուրեն Բաղդասարյանին է վստահվել «Արարատի» մասնակցությամբ ԽՍՀՄ գավաթի 3 եզրափակիչ հանդիպումների ռադիոռեպորտաժների վարումը: Իսկ երբ շատ տարիներ անց հայ ֆուտբոլասերները հնարավորություն ստացան դիտելու ֆուտբոլի չեմպիոնների լիգայի հանդիպումները, կրկին առաջինը Սուրեն Բաղդասարյանին վստահվեց խաղերի մեկնաբանումը: Ճիշտ է, երբեմն նա տարվում է զանազան մեկնաբանություններով, որոնք ընդունելի չեն: Սակայն հեռուստադիտողներն ըմբռնումով են վերաբերվում դրան:**

**Տպագիր մամուլում մարզական լրագրությունը Բաղդասարյանը սկսել է 1991-ից նորաստեղծ «Ազգ» օրաթերթում՝ լինելով մարզական էջի պատասխանատուն: Նրան այդ գործում ակտիվորեն աջակցում էին Ֆրանսիայում բնակվող Ահարոն Բոյաջյանն ու Գրիգոր Ամիրզայանը՝ ամբողջացնելով համաշխարհային սպորտի իրադարձությունների ողջ պատկերը: Իսկ 1996-ին նրա հիմնադրած «Ֆուտբոլ+» շաբաթաթերթն իր արժանի տեղն է գտել հայկական մամուլի ընտանիքում:**

**«Ազգը» շնորհավորում է իր նախկին աշխատակցին եւ վաստակաշատ լրագրողին հոբելյանի առթիվ, ցանկանում անխափան եթեր ու ամենայն բարիք:**

«Ազգ»

# «Արարատը» կգլխավորի Տիգրան Եսայանը

**Վերջին տարիներին Երեւանի «Արարատում» հաճախ են փոփոխվում գլխավոր մարզիչները: Եվ ահա օրերս թիմի մարզչական կազմում նոր փոփոխություն տեղի ունեցավ: Փետրվարի 1-ից «Արարատի» ղեկը կստանձնի Հայաստանի հավաքականի նախկին հարձակվող Տիգրան Եսայանը: Նա կփոխարինի Ալբերտ Սաֆարյանին, որը Տիգրան Գսպեյանի հետ կօգնի Եսայանին: Դարպասապահներին կմարզի մեր անվանի դարպասապահ Ալյոշա Աբրահամյանը:**

**Տիգրան Եսայանը տարիներ առաջ է հրաժեշտ տվել մեծ ֆուտբոլին: Նա ժամանակին հանդես է եկել նաեւ «Արարատում»՝ դառնալով թիմի լավագույն ռմբարկու: Ֆուտբոլիստի կարիերան ավարտելուց հետո Տիգրան Եսայանը մարզչական աշխատանքի է անցել «Բանանցի» մարզադպրոցում:**

**«Արարատում» աշխատանքների ընդհանուր ղեկավարումը Արկադի Անդրեասյանն է իրականացնում: Ինչպես հայտնի է, այս տարի արարատցիները հանդես են գալու առաջին խմբում: Ակումբի ղեկավարությունը ելնելով այն փաստից, որ առաջին խմբում հանդես են գալիս բարձրագույն խմբի դուստր թիմեր, որոնք ուժեղագույնների խմբի ուղեգիր չեն կարող նվաճել, որոշել է առաջնությունում հանդես գալ երիտասարդական կազմով: Թիմի փորձառու ֆուտբոլիստների մեծամասնությունը վարձավճարով հանդես է գալու բարձրագույն խմբի այլ թիմերում: Իհարկե, հասկանալ կարելի է «Արարատի» հովանավորներին, որոնք չեն ցանկանում մեծ գումարներ ծախսել առաջին խմբի թիմի վրա, համարելով, որ բարձրագույն խմբի ուղեգիրն իրենց գրպանում է: Սակայն բացառված չէ, որ այս տարի առաջին խմբում մի նոր թիմ հայտնվի, որը բարձրագույն խմբի ուղեգրի համար պայքար կմղի «Արարատի» հետ: Այդ դեպքում «Արարատին» դժվար կլինի երիտասարդ ֆուտբոլիստներով հաղթող ճանաչվել առաջին խմբի մրցաշարում:**

# Ուիլյամս քույրերը կրկին ուժեղագույնն են

Թենիսի Ավստրալիայի բաց առաջնությունում առաջինը հայտնի դարձան կանանց զուգախաղի հաղթողները: Կրկին իրենց բարձրության վրա գտնվեցին Ուիլյամս քույրերը, որոնք եզրափակիչում հաղթելով Լիզել Հուբեր-Կարա Բլեքի զույգին (6-4, 6-3), արժանացան պատվավոր մրցանակին:

Իսկ տղամարդկանց մրցաշարում հայտնի դարձավ եզրափակիչի 2-րդ մասնակիցը: Ֆրանսիացի Ժո-Վիլֆրեդ Տսոնգային չհաջողվեց դիմակայել թենիսիստների դասակարգման առաջատար Ռոջեր Ֆեդերերին (2-6, 3-6, 2-6): Վերջինս 8-րդ անգամ անընդմեջ մտավ «Մեծ սաղավարտի» մրցաշարերի եզրափակիչ, որտեղ մրցելու է բրիտանացի Էնդի Մարեյի հետ:

Ֆեդերերը նախկինում երեք անգամ (2004, 2006, 2007-ին) հաղթող է ճանաչվել Ավստրալիայի բաց առաջնությունում: Նա «Մեծ սաղավարտի» մրցաշարերում 15 անգամ հաղթող է ճանաչվել, ինչը յուրօրինակ ռեկորդ է: Իսկ ահա Էնդի Մարեյին դեռ երբեք չի հաջողվել հաղթել «Մեծ սաղավարտի» մրցաշարերում: Եթե եզրափակիչում նրան վերջապես ուղեկցի հաջողությունը, ապա Մարեյը կդառնա վերջին 74 տարիների ընթացքում «Մեծ սաղավարտի» մրցաշարերում հաղթած առաջին բրիտանացի թենիսիստը:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW PDF.qxd 1/29/2010 10:24 PM Page 1



# Վաստակաշատ գիտնական-դեղաբանը եւ մանկավարժը

## *Սիմոն Միրզոյան-100*

Լրացավ ականավոր դեղաբան ու մանկավարժ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Երեւանի պետական բժշկական համալսարանի դեղաբանության ամբիոնի նախկին վարիչ Սիմոն Հակոբի Միրզոյանի ծննդյան 100-ամյակը:

Մեծանուն գիտնական, հանրաճանաչ դեղաբան, պրոֆեսոր Ս. Հ. Միրզոյանի անունն իր պատվավոր տեղն ունի հայ բժշկագիտության պատմության մեջ:

Հայկական նորօրյա դեղաբանական դպրոցի հիմնադիրն իր բազմամյա գիտամանկավարժական գործունեության արդյունքում ստեղծել է հայ դեղաբանների մի փայլուն համաստեղություն: Նրա անմիջական ղեկավարությամբ կատարվել են 14 դոկտորական եւ 25 թեկնածուական աշխատանքներ: Ս. Հ. Միրզոյանը ծնվել է Թբիլիսիում, 1910 թ. հունվարի 6-ին: Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո, 1926 թ. ընդունվել է Երեւանի պետական համալսարանի բժշկական ֆակուլտետ եւ 1931 թ. ավարտել արդեն կարգավիճակ ստացած Երեւանի բժշկական ինստիտուտը:

Այդ թվականից էլ սկսվում է բժշկական համալսարանի երախտավորներից մեկի՝ սկզբում մայր բուհի դեղաբանության ամբիոնի ասիստենտի, այնուհետեւ՝ 1936-ից մինչեւ 1988-ը, ամբիոնի վարիչի, գիտամանկավարժական բուռն գործունեությունը:

1935 թ. Ս. Հ. Միրզոյանը պաշտպանում է ատենախոսություն եւ ստանում բժշկական գիտությունների թեկնածուի աստիճան: Այնուհետեւ երիտասարդ գիտնականը ձեռնամուխ է լինում օրգանիզմի վեգետատիվ եւ անիմալ ֆունկցիաների հարաբերության ուսումնասիրությանը, որի արդյունքում 1942 թ. պաշտպանում է դոկտորական ատենախոսություն:

Հայրենական մեծ պատերազմի եւ հետպատերազմյան առաջին տարիները երիտասարդ գիտնականի համար դառնում են նոր դեղերի ստեղծման բեղուն ժամանակաշրջան:

Խորապես գիտակցելով մեր հանրապետության տարածքում տեղակայված խորհրդային զորամասերի, հոսպիտալների հիվանդ եւ վիրավոր մարտիկներին, ինչպես նաեւ ազգաբնակչությանն այնքան անհրաժեշտ դեղորայքի զգալի պակասը, ժամանակի հրամայականին ընդառաջ, նա ձեռնամուխ է լինում նոր դեղամիջոցների որոնմանը, ստեղծմանը՝ հաշվի առնելով տեղական հումքը, դեղաբույսերը, հանքային ջրերը... Նրա ղեկավարությամբ ծավալվում է հայրենանվեր մի աշխատանք, որն իր կարեւորությամբ կենսական նշանակություն ուներ ոչ միայն հայ ժողովրդի համար: Հետագա տասնամյակներում Ս.Միրզոյանն իր ղեկավարած անձնակազմի հետ զբաղվել է բնական եւ սինթետիկ ծագման նոր դեղանյութերի ստեղծմամբ:



Գիտական բազմամյա բեղմնավոր գործունեության վերջին տարիների ընթացքում նրա նախաձեռնությամբ ու անմիջական ղեկավարությամբ ուշադրության արժանի աշխատանքներ են կատարվել ուղեղային շրջանառության ուսումնասիրման բնագավառում, որոնց նպատակն էր լուծել այդ շրջանառության դեղաբանական մի շարք հարցեր, որոնք ունեն որոշակի գործնական նշանակություն եւ կապված են ուղեղի հյուսվածքի մետաբոլիզմի հետ: Ուսումնասիրելով մարդու օրգանիզմի վրա հանքային ջրերի ազդեցությունը՝ նա իր սաների հետ հանգել է այն եզրակացության, որ այդ ջրերի միկրոէլեմենտային կազմը որոշ դեր ունի ռեֆլեկտոր ուղիների տարբեր օղակների գործունեության մեխանիզմում: Այդ բնագավառում կատարված աշխատանքների շնորհիվ բացահայտվեցին լյարդի ֆունկցիայի, ինչպես նաեւ լեղագոյացության ու ստամոքսի հյութարտադրության վրա «Ջերմուկ», «Արզնի», «Հանքավան» հանքային ջրերի ազդեցության որոշ կողմեր:

Ս. Միրզոյանը հեղինակ է 2 հայտնագործության եւ 3 դեղապատրաստուկների, որոնք ներդրվել են գործնական առողջապահությունում:

Հաշվի առնելով անվանի դեղաբանի, մեծահամբավ մանկավարժի ու կազմակերպչի բացառիկ ծառայությունները՝ Ս. Հ. Միրզոյանին 1955 թ. շնորհվել է գիտության վաստակավոր գործչի կոչում:

1960 թ. Ս. Հ. Միրզոյանը ընտրվել է Հայկ.ԽՍՀ ԳԱ անդամ, երկար տարիներ եղել է ֆիզիոլոգների ու դեղաբանների համամիութենական գիտական ընկերության նախագահության մասնագիտական մի շարք հանձնաժողովների խմբագրական կոլեգիաների, հանրապետության նախարարների խորհրդի պետական մրցանակներ շնորհող հանձնաժողովի անդամ: 1971-78 թթ. անվանի գիտնականը միաժամանակ ղեկավարել է Հայաստանի առողջապահության նախարարության գիտաբժշկական խորհուրդը՝ իր ավանդը ներդնելով բժշկության բնագավառում կատարվող գիտական աշխատանքների կազմակերպումն ու կոորդինացումն ապահովող այդ կենտրոնում:

Նրա ծառայություններն ըստ արժանվույն են գնահատվել. ականավոր գիտնականը պարգեւատրվել է մի շարք շքանշաններով, մեդալներով, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի վաստակագրով, Ն.Պ.Կրակովի անվան հուշամեդալով:

Համաշխարհային ճանաչման արժանացած գիտնականի աշխատանքները մեծ հետաքրքրություն են առաջացրել եւ բազմիցս քաղվածվել համաշխարհային բժշկագիտական գրականության մեջ: Նա բազմիցս հրավիրվել եւ զեկուցումներով հանդես է եկել միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Չեխոսլովակիայում, Շվեդիայում, Հոլանդիայում, Ճապոնիայում, Բրազիլիայում, Լեհաստանում, Շվեյցարիայում, Ֆինլանդիայում, Գերմանիայում եւ ԱՄՆ-ում:

Ս.Հ.Միրզոյանի գիտամանկավարժական եւ հասարակական գործունեությանն այսօր արդեն 100-ամյա բարձունքից հետադարձ հայացք նետելով՝ վստահաբար կարող ենք հավաստել, որ այդ տարիները եղել են հարազատ ժողովրդին ու գիտությանը անմնացորդ նվիրումով ծառայելու, հանրապետության համար բժշկական բարձրորակ կադրեր պատրաստելու արգասաբեր տարիներ:

Ս. Հ. Միրզոյանը ջանք ու եռանդ չի խնայել, որպեսզի բժշկական համալսարանի ուսանողներն ստանան մասնագիտական խոր գիտելիքներ: Նա լինելով մեծապես խստապահանջ ինչպես իր, այնպես էլ շրջապատի նկատմամբ, կարգ ու կանոնի պահպանման համար հետեւողական, անզիջում եւ սկզբունքային ղեկավար արժանիորեն վայելում էր ինչպես ուսանողների, այնպես էլ աշխատակիցների սերն ու հարգանքը:

Նրա բազմաթիվ աշակերտները եւ հետնորդները հանրապետության բժշկական հասարակայնությունը, բոլոր նրանք, ովքեր ճանաչում էին անվանի գիտնականին, իրենց երախտագիտության եւ հարգանքի տուրքն են մատուցում գիտության անդուլ մշակին, անխոնջ գիտնականին, ազնիվ մարդուն ու մեծ քաղաքացուն, որն իր ողջ գիտակցական կյանքը նվիրաբերեց մայր ժողովրդին ու հայրենիքին ծառայելու սրբազան ու պատվավոր գործին:

**ՎԻԼԵՆ Պ. ՀԱԿՈԲՅԱՆ**
**ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար**

## Մրցույթի հրավեր

***Տվյալների բազայի համար համակարգչային ծրագրի եւ հայկական ճարտարապետության վերաբերյալ վեբ կայքի ստեղծում***

Մրցույթի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է՝ փետրվարի 8, 2010թ.:

Ծրագիրը իրականացվում է երեք Եվրոպական գործընկերների՝ **Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ֆրանսիայի մասնաճյուղի, Հայկական Մշակույթի Ուսումնասիրության եւ Փաստաթղթերի կենտրոնի (CSDCA), Իտալիա, Ինսայդ Յուրոփ-ի (Inside Europe), Բելգիա,** եւ **Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության** հետ համագործակցությամբ:

### Ա. Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է թվայնացման միջոցով պահպանել հայկական հուշարձանների ժառանգությանը նվիրված արխիվների (գրառված եւ ֆոտո) հավաքածուները:

Ծրագիրը նաեւ նպատակ ունի ներկայացնել արխիվները՝ միավորելով, ցուցակագրելով, ինդեքսավորելով եւ տարածելով դրանք լայն հասարակության մեջ:

Ծրագիրը հնարավորություն կտա Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպության արխիվները բարելավել, մեծացնել տվյալների բազան (148 000-ից այն դարձնելով 300 000 փաստաթուղթ) եւ համալրել տվյալները օն-լայն աշխատանքի միջոցով:

Տվյալների բազայի եւ ինտերակտիվ վեբ կայքի ստեղծումը միասին կնպաստեն միջազգային մակարդակով հետազոտողների, ուսանողների, արվեստագետների եւ ճարտարապետների միջեւ գիտելիքների տարածմանը եւ փոխանակմանը:

### Բ. Ծրագրի փուլերը

**Փուլ առաջին.** Տվյալների բազայի համար համակարգչային ծրագրի ստեղծում

Տեւողություն՝ 12 ամիս

Անհրաժեշտ առաջադրանքները.

- Տվյալների բազայի կառուցվածքի եւ պատկանելիքների ցանկի որոշում,
- Ընդհանուր ֆորմատի եւ տվյալների բազայի հիմնական դաշտերի ստեղծում,
- Ընտրված մասնագետների խմբի հետ տվյալների բազայի գաղափարի եւ կառուցվածքի նախնական փորձարկում,
- Պատվիրատուի հետ համաձայնեցման միջոցով համակարգչային ծրագրի նախնական տարբերակի ստեղծում
- Նշված համակարգչային ծրագրի նախնական տարբերակի փորձարկում եւ խնդիրների լուծում
- Ընտրված համակարգիչների վրա համակարգչային ծրագրի տեղադրում
- Տվյալների բազայի մեջ թվայնացված փաստաթղթերը ինտեգրող անձնակազմի համար ուսուցողական դասընթացների կազմակերպում,
- Համակարգչային ծրագրի վերջնական հանձնում անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթերի հետ միասին
- Մեկ տարի տվյալների բազայի սպասարկում:

**Փուլ երկրորդ.** Ինտերակտիվ վեբ կայքի ստեղծում տվյալների բազայի շուրջ:

Տեւողությունը՝ 8 ամիս:

Անհրաժեշտ առաջադրանքները.

- Ինտերակտիվ վեբ կայքի ստեղծում՝ գրավիչ եւ ժամանակակից դիզայնով, որը համահունչ կլինի ծրագրի մասնակից կազմակերպությունների ինքնության բնույթին
- Հետազոտողների եւ ուսանողների միջեւ երկխոսությունների համար բլոգի ստեղծում
- Հայկական ժառանգության վերաբերյալ նորությունների, հրապարակումների եւ «մասնագիտական պատասխանների» ներառում
- Հնարավորություն կտա կազմակերպելու վիրտուալ ցուցադրումներ
- Կլինի երկլեզու՝ հայերեն եւ անգլերեն
- Կներառի մոտ 30 000-40 000 ֆոտո փաստաթղթեր
- Վեբ կայքի կառուցման յուրաքանչյուր փուլ պետք է ՀԲԸՄ Ֆրանսիայի մասնաճյուղի հավանությունը ստանա:

Գ. Ընդհանուր տեղեկություններ

Պատվիրատու՝ ՀԲԸՄ (Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության) Ֆրանսիայի մասնաճյուղ

Մրցույթի մասնակցության հայտերը ներկայացնելու եւ այլ մանրամասն տեղեկությունների համար դիմել

**Հասցե.** *UGAB France to Raymond Kevorkians attention*
*11 square Alboni, 75016 Paris, France*
*էլ. փոստ. contact@agbueurope.org*

## Շաբաթական ամփոփ տվյալներ

Հունվարի 25-ից 29-ն ընկած ժամանակահատվածում արտարժույթի ներբանկային շուկայում բանկերի կողմից գնվել է 52,236,690 ԱՄՆ դոլար՝ 376.89 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով, եւ վաճառվել 47,763,206 ԱՄՆ դոլար՝ 378.15 դրամ ԱՄՆ մեկ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ում նշված ժամանակահատվածում իրականացվել է 4,475,000 ԱՄՆ դոլարի առք եւ վաճառք՝ 377.26 դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց միջին փոխարժեքով:

Հունվարի 18-ից 24-ն ընկած ժամանակահատվածում բանկերի կողմից դրամով տրամադրված վարկերի ծավալը կազմել է 14 մլրդ դրամ, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի ծավալը՝ 26.3 մլն ԱՄՆ դոլար:

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

WWW.
azg.am

### Հայտարարություն

Սույն թվականի փետրվարի 3-ին, ժամը 1200 -ին **«Հանքստի աշխարհ» ՍՊԸ «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ը** կազմակերպում են հասարակական լսումներ ՀՀ Կոտայքի մարզի Արզական համայնքում գտնվող հանգստի համալիրի եւ նախատեսվող բնակելի տների նախագծերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Ք.Երեւան Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-15-68:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 29.01.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: